ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՅՈՒՐՈ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑ 2013Թ.
ՀԱՅԱՍՏԱՆ

Հրապարակվել է 27 փետրվարի, 2014թ.

ԱՄՓՈՓԻՉ ԱԿՆԱՐԿ

Ըստ սահմանադրության Հայաստանը երկրի ընտրովի ղեկավար և միապալատ օրենսդիր կառույց (Ազգային ժողով) ունեցող հանրապետություն է: Փետրվարի 18-ին երկրում անցկացվեցին նախագահական ընտրություններ, որոնք ըստ Եվրոպայի անվտանգության և համագործակցության (ԵԱՀԿ) Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) ընդհանուր առմամբ արհեստավարժ, բաց ու թափանցիկ կերպով էին կազմակերպված՝ հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքով, սակայն առանձնացան թերություններով, այդ թվում՝ ոչ հավասար խաղի պայմաններով, քվեարկության օրը գրանցված լուրջ խախտումներով և ընտրական գործընթացի ամբողջականության վերաբերյալ մտահոգություններով: Իշխանությունները պահպանել են արդյունավետ վերահսկողություն անվտանգության ուժերի նկատմամբ. անվտանգության ուժերի որոշ անդամներ թույլ են տվել մարդու իրավունքների ոտնահարումներ:

Տարվա ընթացքում մարդու իրավունքների ամենանշանակալի խնդիրներն էին կոռուպցիան և կառավարման համակարգում թափանցիկության բացակայությունը, իշխանություններին փոխելու քաղաքացիների իրավունքի սահմանափակումները, և դատական համակարգի սահմանափակ անկախությունը: Պետական կառավարման բոլոր օղակներում մշտապես տիրող կոռուպցիայի մասին պնդումները խաթարում էին իրավունքի գերակայությունը, չնայած կառավարությունը ձեռնարկել էր ստորին և միջին օղակի պաշտոնյաների շրջանում կոռուպցիոն դրսևորումները պատժելու սահմանափակ քայլեր: Չնայած այն հանգամանքին, որ թեկնածուները կարողացան ազատորեն իրականացնել իրենց քարոզարշավը, փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների անցկացման ընթացքում տեղ գտան այնպիսի թերություններ, ինչպիսիք են՝ պետական կառավարման մարմինների անաչառության պակասը, վարչական ռեսուրսի չարաշահումը հօգուտ իշխանական կուսակցության, ընտրակաշառքի վերաբերյալ արժանահավատ պնդումները, ընտրական օրենսգրքի կիրառման շարունակական թերացումները, և բողոքների ներկայացման ու բողոքարկման այնպիսի գործընթաց, որը չէր ապահովում արդյունավետ բավարարում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ նկատել է նաև միտում առ այն, որ միջինից բարձր մասնակցություն ունեցող ընտրատեղամասերի մեծամասնությունում զգալիորեն ավելի լավ վերջնական արդյունքներ են գրանցվել հօգուտ գործող նախագահի, ինչը վկայում է «քվեարկության ու ձայների հաշվարկման ընթացքում հնարավոր լուրջ խնդիրների մասին», որը բարձրացրեց «մտահոգություններ ընտրական գործընթացի ամբողջականության» վերաբերյալ: Դատարանները շարունակել են ենթարկվել քաղաքական ճնշման գործադիր ճյուղի կողմից, որի արդյունքում եղել են քաղաքական շարժառիթներով պայմանավորված դատական հետապնդումներ ու դատապարտումներ, իսկ Վճռաբեկ դատարանը զգալի վերահսկողություն է ունեցել բոլոր մակարդակներիդատավորների որոշումների նկատմամբ:

Տարվա ընթացքում արձանագրված այլ խնդիրները ներառում են զինված ուժերում ոչ մարտական պայմաններում գրանցված կասկածելի մահվան դեպքերը, կանոնակարգային հարաբերությունների շարունակվող խախտումները և վատ վերաբերմունքը զորակոչիկների հանդեպ սպաների և ծառայակից զինվորների կողմից և պատասխանատվության ենթարկելու բացակայությունն այդպիսի արարքների համար: Ըստ հնչող մեղադրանքների ոստիկանությունը շարունակել է

խոստովանություններ կորզելու նպատակով խոշտանգումների կիրառումը և ձերբակալելիս ու հարցաքննությունների ժամանակ ծեծի է ենթարկել քաղաքացիներին: Շատ բանտեր եղել են գերբնակեցված, անբավարար սանիտարահիգիենիկ պայմաններում և չի ապահովվել բանտարկյալների բուժսպասարկումը: Իրավասու մարմինները շարունակել են քրեական հանցանքների մեջ կասկածվողներին ձերբակալել և բերման ենթարկել առանց ողջամիտ կասկածի, և բերման ենթարկել անձանց կամայականորեն: Դատաքննությունները սովորաբար երկար են տևել և դատարանները չեն կարողացել ապահովել արդար դատաքննության իրավունքն ապահովող օրենքների կիրառումը: Իշխանությունների կողմից համարժեքորեն չեն կիրառվել անձի մասնավոր կյանքի իրավունքին պետության կողմից միջամտելու ու անօրինական խուզարկությունների դեմ ուղղված օրենքները: Նախընտրական շրջանից դուրս լրատվամիջոցներում բացակայել է քաղաքական բազմակարծությունը: Թեպետ իշխանություններն ազատ են արձակել անազատության մեջ գտնվող Եհովայի վկաների բոլոր անդամներին, կառավարության կողմից սահմանափակումներն ազդել են որոշ փոքրամասնություն կազմող կրոնական խմբերի վրա, չնայած գրանցված կրոնական խմբերի մեծամասնության կողմից իրենց գործունեության հանդեպ զգալի իրավական խոչընդոտների մասին հաղորդումներ չեն եղել: Կրոնական փոքրամասնությունների անդամները ենթարկվել են խտրական վերաբերմունքի հասարակության կողմից: Շարունակում էր խնդրահարույց մնալ ընտանեկան բռնությունը, սակայն այն հիմնականում չէր հաղորդվում իրավասու մարմիններին: Խնդիր էր հանդիսանում մարդկանց թրաֆիքինգը, սակայն իշխանությունները ձեռնարկել են դրա դեմ պայքարի միջոցներ: Հաշմանդամություն ունեցող անձիք ենթարկվել են խտրականության կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Լեսբուհի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր (ԼԳԲՏ) անձինք զինվորական ու քրեակատարողական մարմինների կողմից ենթարկվել են չարաշահումների և խտրականության. խնդրահարույց էր նաև հասարակության խտրական վերաբերմունքը: Սահմանափակվել են աշխատողների իրավունքները, և թույլ է եղել աշխատանքային օրենսդրության կիրարկումը:

Թեպետ իշխանությունները ձեռնարկել են ինչ-որ քայլեր պատժելու չարաշահումներ թույլ տված անվտանգության ուժերի և այլ կառույցների պաշտոնյաներին, սակայն անվտանգության ուժերի որոշ անդամներ շարունակել են անպատժելիորեն թույլ տալ մարդու իրավունքների խախտումներ՝ գտնվելով քաղաքացիական ղեկավարության ենթակայության ներքո: Տարեվերջի դրությամբ 2008թ. նախագահական ընտրություններից հետո տեղի ունեցած բախումներին զոհ գնացած 10 անձանց մահվան գործով իշխանությունները ոչ ոքի պատասխանատվության չէին ենթարկել:

ՄԱՍ 1. ՀԱՐԳԱՆՔ ԱՆՁԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

ա) Կամայական կամ անօրինական ձևով կյանքից զրկելը

Չեն եղել հաղորդումներ իշխանությունների կամ վերջինիս գործակալների կողմից կամայական կամ անօրինական սպանությունների վերաբերյալ, սակայն ոչ մարտական պայմաններում բանակում գրանցված մահվան դեպքերը շարունակել են մնալ խնդրահարույց: Ըստ իշխանությունների հաղորդման տարվա առաջին ինն ամիսների ընթացքում ոչ մարտական պայմաններում գրանցված մահվան ելքով դեպքերը եղել են 10-ը: Բանակում գրանցված մահվան դեպքերը քննում է զինվորական դատախազը:

Հուլիսի 31-ին Պաշտպանության նախարարությունը հաղորդեց հրազենային վնասվածքներից ժամկետային զինծառայող Մանուչար Մանուչարյանի մահվան մասին: Նախարարության քննչական վարչությունը քրեական գործ հարուցեց ինքնասպանության հասցնելու հոդվածով, չնայած այն հաղորդումներին, որ Մանուչարյանը գլխի հատվածում ստացել էր երեք հրազենային վնասվածք: Հելսինկյան ասոցիացիայի փորձագետ Ռուբեն Մարտիրոսյանը պնդում էր, որ քննչական վարչությունը ստիպել է Մանուչարյանի մանկության ընկերուհուն ցուցմունք տալ, որ Մանուչարյանը

սիրահարված էր իրեն, սակայն ինքը մերժել է նրան և դա դարձել է ինքնասպանության շարժառիթ: Բացի այդ, Մարտիրոսյանը նշում էր, որ Մանուչարյանի դիակի մոտ գտնված հրազենի վրա քննիչները մատնահետքեր չեն հայտնաբերել: Մանուչարյանի ընտանիքը հերքել էր քննչական վարչության կողմից ավելի վաղ արած պնդումը, թե իրենց որդին իբր հարել է կրոնական փոքրամասնության: Նոյեմբերի դրությամբ գործի քննությունը դեռ ընթացքի մեջ էր:

Մարդու իրավունքների դիտորդները շարունակում էին պնդել, որ զինված ուժերում հաղորդված ոչ կանոնակարգային հարաբերությունների ու մահվան միջադեպերի գերակշիռ մասի դեպքում իշխանությունները ներկայացնում են դեպքերի հղկված տարբերակները և հետագա քննությունը կենտրոնացնում են այդ նախնական վարկածը հաստատելու վրա: Դիտորդները պնդում էին, որ դեպքերի մեծ մասում զինված ուժերում հրաժարվում են պատժել այդ արարքների պատասխանատուներին: Ըստ Հելսինկյան ասոցիացիա ՀԿ-ի՝ քննիչները, դատախազները, բոլոր օղակների դատավորները գործում էին որպես մի համակարգ, որը կոծկում և քողարկում է զինված ուժերում գրանցված մահվան դեպքերի իրական մեղավորներին: Դատարանները սովորաբար անփոփոխ են թողել, իսկ դատախազները պաշտպանել են այն մեղադրականները, որոնք հիմնված էին այնպիսի քննությունների վրա, որոնց ընթացքում քննիչներն անօրինական կերպով կալանավորել ու հարկադրել են վկաներին ու կասկածյալներին կեղծ ցուցմունք տալ՝ ֆիզիկական ու հոգեբանական ճնշումների միջոցով: Ըստ հաղորդումների քննիչները ոչնչացրել կամ փոխարինել են իրեղեն ապացույցներն ու մատնահետքերը:

Հուլիսին զինվորական դատախազը հայտարարեց ՀԿ-ների և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խումբ ստեղծելու մասին, որը կվերանայեր 2011թ.-ի սկզբից ի վեր զինված ուժերում արձանագրված մահվան դեպքերի քննությունները: Իրավապաշտպան ՀԿ-ները ոչ միանշանակ կերպով արձագանքեցին այս նախաձեռնությանը և որոշները, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը հրաժարվեցին մասնակցել աշխատանքային խմբի աշխատանքներին՝ հաշվի առնելով խմբի իրավասությունների սահմանափակ ու ոչ հստակ շրջանակը: Սեպտեմբերի 10-ին, մի քանի աշխատանքային հանդիպումներից հետո, խմբում ընդգրկված ՀԿ-ներից երկուսը հրաժարվեցին հետագա մասնակցությունից, այն բանից հետո, երբ զինվորական դատախազը կարճեց Սյունիքի նախկին մարզպետի որդու դեմ հարուցված գործը (Տես՝ Բաժին 1.դ):

Տարվա ընթացքում շարունակվում էր դատավարությունն ընդդեմ այն անձանց, ովքեր մեղադրվում էին 2012թ. հունիսին զինվորական բժիշկ Վահե Ավետյանի մահվան մեջ: Ազգային ժողովի նախկին պատգամավոր Հանրապետական Ռուբեն Հայրապետյանին պատկանող ռեստորանի անվտանգության աշխատողներն ու անձնակազմը հարձակվել ու ծեծի էին ենթարկել Վահե Ավետյանին և չորս այլ անձանց: Ավետյանի ընտանիքը ներկայացնող փաստաբանները մեղադրեցին քննիչներին միտումնավոր կերպով մակերեսային ու ոչ համակողմանի քննություն անցկացնելու ու մեղավորներին արտասովորության աստիճան մեղմ պատիժներ ներկայացնելու մեջ: Բազմաթիվ խմբեր պնդում էին, որ քննիչները հանցանքի մեջ Հայրապետյանի ներգրավվածության մասով մանրակրկիտ քննություն չեն անցկացրել: Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության կամ ծանր վնաս հասցնելու և ծեծի ենթարկելու համար մեղադրանք էր ներկայացված վեց ամբաստանյալների: Ընդհանուր մեղադրանքների համար առավելագույն պատժաչափը 15 տարվա ազատազրկումն էր:

Անջատողականները, Հայաստանի աջակցությամբ, շարունակել են վերահսկել Լեռնային Ղարաբաղի մեծ մասը և ադրբեջանական յոթ այլ տարածքներ: Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հարցը շարունակում է մնալ միջազգային միջնորդական ջանքերի օրակարգում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում, որտեղ համանախագահում են Ռուսաստանը, Ֆրանսիան և Միացյալ Նահանգները:

Մայիսի 20-ին Ազգային ժողովը հրաժարվեց ձևավորել 2008թ. հետընտրական խռովությունները դիտարկող նոր ժամանակավոր հանձնաժողով: Տարեվերջի դրությամբ 2008թ. նախագահական

ընտրություններից հետո սպանված ութ քաղաքացիական անձանց և երկու ոստիկանների մահվան գործով որևէ մեկն իշխանությունների կողմից պատասխանատվության չէր ենթարկվել:

բ) Անհետացումներ

Քաղաքական շարժառիթներով պայմանավորված անհետացումների մասին հաղորդումներ չեն եղել:

գ) Խոշտանգումներ և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ

Չնայած օրենսդրությամբ հիշյալ երևույթներն արգելվում են, սակայն ըստ հաղորդումների անվտանգության ուժերի անդամները շարունակել են դրանք կանոնավոր կիրառել: Ըստ վկաների հաղորդումների ոստիկանները ձերբակալելիս և հարցաքննելիս ծեծի են ենթարկել քաղաքացիներին: Իրավապաշտպան ՀԿ-ները հնչեցրել են նմանատիպ մեղադրանքներ, և նշել, որ հաշվեհարդարի վախից ելնելով ոստիկանության անօրինաչափ գործողությունները հիմնականում չեն հաղորդվում: Ըստ հաղորդումների՝ ոտնձգությունների գերակշիռ մասը տեղի է ունենում ոստիկանական բաժանմունքներում, քանի որ դրանք հասարակական դիտորդների կողմից չեն վերահսկվում, և ոչ թե բանտերում կամ ձերբակալվածների պահման վայրերում, որտեղ հասարակական դիտորդները մուտքի իրավունք ունեն: Ըստ ՀԿ-ների՝ բազմաթիվ անձինք, որոնց իշխանությունները ոստիկանությունից բանտեր են տեղափոխել, հայտնել են, որ ոստիկանության հսկողության տակ գտնվելու ժամանակ իրենք ենթարկվել են խոշտանգումների, բռնությունների կամ ահաբեկման՝ հիմնականում խոստովանություն կորզելու նպատակով:

Հայաստանում Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացման մասին ԵՄ 2012թ. զեկույցի համաձայն, որը հրապարակվեց մարտի 20-ին, խոշտանգումները քրեականացնող օրենքում խոշտանգման սահմանումը չի համապատասխանում Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի սահմանմանը: Օրինակ՝ օրենքը չի ընդգրկում պետական պաշտոնյաների կողմից գործած հանցանքները, այն վերաբերում է միայն անհատների կողմից որպես մասնավոր անձ կատարած հանցանքներին: Համապատասխանաբար, երկրի դատարանների կողմից խոշտանգումների մեղադրանքով որևէ պետական պաշտոնյա չի դատապարտվել:

Մարտի 13-ին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը (ՅՈՒՆԻՍԵՖ-ը) ներկայացրեց մի շարք տեղական ու միջազգային կառույցների կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքներն անչափահասների նկատմամբ խոշտանգումների ու ոչ իրավաչափ վերաբերմունքի վերաբերյալ՝ սկսած նրանց բերման պահից մինչև պատժի ամբողջական կրումը: 86 անչափահասների հետ անցկացված հարցազրույցներով բացահայտվեց, որ ոչ իրավաչափ վերաբերմունքի հիմնական դրսևորումներն են ծեծը և ֆիզիկական ճնշումների գործադրումը ոստիկանության կողմից՝ խոստովանություն կորզելու նպատակով: Երեխաներից 8-ը նշեցին, որ անձամբ բռնությունների են ենթարկվել, իսկ հարցվածների 51 տոկոսը լսել էին մյուս երեխաների նկատմամբ ոչ իրավաչափ վերաբերմունքի, այդ թվում՝ ծեծի, սեռական բռնությունների, հայհոյանքների, ահաբեկման ու սպառնալու մասին: Ըստ զեկույցի երեխաները չէին ցանկանում հաղորդել ոչ իրավաչափ վերաբերմունքի մասին, քանի որ վախենում էին հաշվեհարդարից ու վստահություն չունեին համակարգի նկատմամբ: Զոհերի մեծ մասը կարծում էին, որ բողոք ներկայացնելու հետ կապված ռիսկերը՝ իրենց նկատմամբ պատժի ու հաշվեհարդարի հավանականությունը, շատ ավելի մեծ էր, քան մեղավորին պատժելու հավանականությունը:

Մայիսի 3-ին Հայաստանի Հելսինկյան կոմիտեն ներկայացրեց ոստիկանության բաժանմունքներում բերման ենթարկված անձանց հանդեպ վերաբերմունքի վերաբերյալ բացահայտումները՝ հիմնված Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում նախնական կալանքի տակ գտնվողների հետ ունեցած քննարկումների և հարցաշարերի վրա: Նրանք, ովքեր լրացրել էին հարցաշարերը նշում էին, որ Երևանի կամ մարզերի ոստիկանական բաժանմունքներում գտնվելու ժամանակ ենթարկվել են կամ

հոգեբանական ճնշումների, կամ ֆիզիկական ոտնձգությունների: Հարցվածներից ոչ մեկը ոստիկանության պահման վայրից քրեակատարողական հիմնարկ փոխադրվելու ժամանակ չի հաղորդել ոտնահարումների մասին, քանի որ փոխադրման ժամանակ անցկացվող բուժզննմանը ներկա են եղել ոստիկաններ: Ըստ հաղորդումների ոստիկանությունը ստիպել է կալանքի տակ գտնվող շատ անձանց հրաժարվել փաստաբանի ծառայություններից: Ըստ իրավապաշտպան դիտորդների ոստիկանությունները սովորաբար հարվածներ այնպես, որ հետքեր չմնան: Նույն ուսումնասիրության շրջանակում դատավորների ու իրավապահների հետ խոսակցություններից պարզվել է, որ բռնությունների միջոցով խոստովանությունների ձեռքբերումը քննիչները համարում են հանցանքի բացահայտման ամենաարդյունավետ ուղին:

Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) գրասենյակի 2012թ. տարեկան զեկույցում, որը հրապարակվեց մարտին, նույնպես նշվում էր, որ խոստովանություն կորզելու նպատակով ոստիկանության քննչական մարմինների կողմից անձանց նկատմամբ ցուցաբերվում է դաժան, ոչ մարդկային ու նվաստացնող վերաբերմունք:

Ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբը, որն իրավասու մարմինների թույլտվությամբ ոստիկանության պահման վայրերում ստուգումներ անցկացնող ՀԿ-ների միավորում է, օգոստոսին հրապարակեց իր տարեկան զեկույցը 2012թ. վերաբերյալ: Խմբի դիտարկումների համաձայն ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում գտնվող յուրաքանչյուր երրորդ անձ ենթարկվել էր անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի: Զեկույցում մատնանշվում էր, որ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրեր փոխադրվող անձանց բուժզննումը միշտ չէր, որ պատշաճ կերպով էր իրականացվում և ձերբակալված անձինք միշտ չէ, որ պատշաճ բուժօգնություն էին ստանում: Իշխանությունները բուժզննումն ու ֆիզիկական զննումն անցկացրել են նվաստացնող պայմաններում՝ դրսի մարդկանց ներկայությամբ, իսկ երբեմն էլ զննումներն անցկացվել են հաշվապահի, մաքրողի կամ վարչական աշխատողի կողմից:

Մարտի 14-ին երկրի ոստիկանապետը Երևան քաղաքի նոր ոստիկանապետի պաշտոնում նշանակեց Աշոտ Կարապետյանին: Նշանակումից կարճ ժամանակ անց Գրիշա Վիրաբյանը, ով Մարդու իրավունքների եվրոպական դատարանում շահել էր 2004թ. ոստիկանության կողմից իր նկատմամբ խոշտանգումներ կատարելու մասին գործը, հայտարարեց, որ իրեն խոշտանգումների ենթարկողներից մեկը, ով ՄԻԵԴ-ի կողմից հիշատակված է որպես Ա. Կ., նույն ինքը Կարապետյանն էր, ով այն ժամանակ զբաղեցնում էր ոստիկանության Արարատի մարզային վարչության պետի տեղակալի պաշտոնը: Իշխանությունները պաշտպանեցին այս նշանակումը. տարեվերջի դրությամբ Վիրաբյանի նկատմամբ ոչ իրավաչափ վերաբերմունքի համար որևէ մեկին մեղադրանք ներկայացված չէր: Իրավապաշտպան դիտորդները և լրատվամիջոցները քննադատեցին Կարապետյանի նշանակումը՝ փաստելով, որ դա ամրապնդեց լայնորեն ընդունված համոզմունքն այն մասին, որ ոստիկանության աշխատակիցները մարդու իրավունքների խախտումների համար պատասխանատվության չեն ենթարկվում:

Կարապետյանի անունը շրջանառվեց ոստիկանության բռնությունների հետ կապված մեկ այլ գործի շրջանակում: Սեպտեմբերի 13-ին լրատվամիջոցներում հաղորդում եղավ այն մասին, որ վերաքննիչ դատարանը հանձնարարել է իրավապահ մարմիններին քննել ոստիկանության կողմից 2012թ. Գյումրու նախկին քաղաքապետի դստեր փեսացու Կարեն Եսայանի մեծ հնչեղություն ստացած սպանության գործով կասկածյալ Հարություն Սարգսյանին խոշտանգումների ենթարկելու մասին պնդումները: Ըստ Սարգսյանի հոր՝ Գյումրու ոստիկանությունը՝ մարզային վարչության պետ Բաբակեխյանի ղեկավարության ներքո, խոշտանգումների է ենթարկել իր որդուն՝ խոստովանություն կորզելու նպատակով և ոչ իրավաչափ վերաբերմունքը նրա հանդեպ շարունակվել է Երևանի ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայր փոխադրելուց հետո: Սարգսյանի հայրը հավաստիացնում էր, որ ոստիկանությունում այնպես են ծեծել Սարգսյանին, որ այտուցների

պատճառով նրա ոտքերը կոշիկների մեջ չեն տեղավորվել և նա ստացել է բազմաթիվ վնասվածքներ, այդ թվում ոսկորի կոտրվածք ականջի վերնամասում: Չնայած հնչեցված վնասվածքների մասին գրառում կալանավայրում չկար, սակայն Սարգսյանը բռնությունների մասին այս պնդումը կրկնեց դատարանում: Երևանում ոտնձգություններ կատարածներից մեկը, ըստ հաղորդումների, ներկայացել է տուժողին որպես ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետ, մի պաշտոն, որն այդ ժամանակ զբաղեցնում էր Աշոտ Կարապետյանը: Նոյեմբերի դրությամբ սպանության գործով Սարգսյանի դատավարությունը դեռ ընթացքի մեջ էր:

2012թ. հուլիսին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն մտահոգություն հայտնեց անազատության մեջ պահելու վայրերում խոշտանգումների ու դաժան վերաբերմունքի մեղադրանքները քննելու իրապես անկախ մեխանիզմի բացակայության, ինչպես նաև նմանատիպ մեղադրանքներով իրականացվող դատական հետապնդումների փոքր թվի վերաբերյալ:

Զինված ուժերում կենցաղային վատ պայմանները, կոռուպցիան և հրամանատարների հաշվետվողականության բացակայությունը շարունակել են վատ վերաբերմունքի դրսևորման և մարտական գործողությունների հետ կապ չունեցող վնասվածքների պատճառ հանդիսանալ: Չնայած զինված ուժերում ոչ կանոնակարգային հարաբերությունների տարածվածության վերաբերյալ հուսալի վիճակագրություն չկա, սակայն զինվորները հաղորդել են իրավապաշտպան կազմակերպություններին, որ նման չարաշահումները շարունակվել են: Զինվորների ընտանիքները հայտնել են, որ զորամասերը վերահսկում են կոռումպացված պաշտոնյաները, իսկ իրավապաշտպան դիտորդները և օմբուդսմենը հաղորդել են այնպիսի դեպքերի մասին, երբ բանակ են զորակոչվել առողջական լուրջ խնդիրներ ունեցող անձինք, ովքեր նման խնդիրների դեպքում պետք է համարվեին զինվորական ծառայության համար ոչ պիտանի:

Բանտերի ու կալանավայրերի պայմանները

Բանտերում շարունակել են խնդրահարույց մնալ գերբնակեցվածությունը, անբավարար սանիտարահիգիենիկ պայմանները, բուժսպասարկումը և կոռուպցիան, իսկ որոշ դեպքերում պայմանները եղել են խիստ ծանր և կյանքի համար վտանգավոր:

<u>Ֆիզիկական պայմաններ</u>. Տարվա առաջին ինն ամիսների ընթացքում քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց միջին թիվը կազմել է 4742 մարդ: Քրեակատարողական հիմնարկություններն, ընդհանուր առմամբ հնարավորություն ունեն տեղավորել 4395 մարդ:

Տարվա առաջին ինն ամիսների ընթացքում Աբովյանի կանանց և անչափահասների համար նախատեսված քրեակատարողական հիմնարկում պահվող կանանց միջին թիվը կազմել է 203 հոգի, իսկ անչափահասներինը (որոնցից մեկն իգական սեռի)՝ 24 հոգի: Անչափահաս իգական սեռի բանտարկյալների համար չկար առանձին տեղ, հիմնականում այն պատճառով, որ այդպիսի դատապարտյալներ հազվադեպ են լինում. այնուհանդերձ, դատապարտվելու դեպքում նրանք պահվում են չափահաս կանանց հետ: Աբովյան քրեակատարողական հիմնարկում բանտարկյալներն ապրում էին մեծ հանրակացարաններում՝ անչափահաս տղաները կանանցից առանձին: Ըստ տեղական դիտորդների կանանց համար ստեղծված խմբային այնպիսի պայմաններն ավելի վատն էին, քան այն քրեակատարողական հիմնարկներում, որտեղ բանտարկյալները պահվում էին առանձին խցերում:

Ըստ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2012թ. զեկույցի ոստիկանության ձերբակալված անձանց պահելու խցերի գերբնակեցվածությունն ու դրանց փաստացի օգտագործումը որպես նախնական կալանքի տակ գտնվողների պահման վայր խնդրահարույց էր: Երևանից դուրս նախնական կալանքի տակ գտնվողների թիվը ոստիկանական կալանախցերում գերազանցել է ձերբակալվածների թիվը՝ ավելի քան երկուսը մեկին հարաբերակցությամբ. եղել են 2055 նախնական կալանքի տակ գտնվողներ

և 816 ձերբակալվածներ: Թեպետ զեկույցը վերաբերում էր ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերին, սակայն ոստիկանական բաժանմունքները ներառված չէին, քանի որ իշխանությունները հասարակական դիտորդների խմբին դրանց մշտադիտարկման թույլտվություն չէին տվել:

Ըստ պաշտոնական տեղեկատվության բանտերում տարվա առաջին ինն ամիսների ընթացքում գրանցվել է մահվան 14 դեպք, ընդ որում 11-ը հիվանդության պատճառով, 2-ը՝ ինքնասպանություն, իսկ 1-ը՝ ընկնելու հետևանքով ստացած վնասվածքներից: Ըստ իրավապաշտպան կազմակերպությունների մահացության ցուցանիշին նպաստել են քրեակատարողական հաստատությունների գերբնակեցվածությունը, շենքային վատ պայմանները և բանտարկյալների բուժօգնության հարցում անփութությանը: Քրեակատարողական հաստատությունները միացված են խմելու ջրի մատակարարման տեղական համակարգերին, սակայն, երբեմն տեղի էին ունենում ջրամատակարարման ընդհատումներ:

Դեկտեմբերին Հայաստանի Հելսինկյան կոմիտեն հրատարակեց բանտային պայմանների մասին ուսումնասիրությունը, որի հիմքում տարբեր քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրած արական սեռի 33 նախկին բանտարկյալների հետ ունեցած հարցազրույցներն էին: Զեկույցի համաձայն համատարած կոռուպցիան անդրադառնում էր բանտային կյանքի բոլոր ոլորտների վրա: Թեպետ պաշտոնապես քրեակատարողական համակարգը գտնվում է արդարադատության նախարարության ենթակայության տակ, սակայն այն դուրս էր նախարարության վերահսկողության դաշտից, քանի որ քրեակատարողական վարչության պետը նշանակվում էր ուղղակիորեն նախագահի կողմից: Զեկույցը եզրակացնում էր, որ իշխանության բոլոր օղակներում բացակայում էր համակարգում նշանակալի դրական տեղաշարժեր կատարելու քաղաքական կամքը:

Բանտերի վարչական աշխատողներն ու բանտապահները բավարար վարձատրություն չէին ստանում և ըստ զեկույցի հիմնական ծառայությունների ու արտոնությունների համար զարտուղի ճանապարհներով բանտարկյալներից կաշառք էին կորզում: Օրինակ՝ բանտարկյալները վճարում էին ավելի լավ խուց ձեռք բերելու, ցնցուղ ընդունելու, այլ խցեր այցելելու, խցի ստուգումներից խուսափելու, դեղորայք և թմրամիջոցներ ձեռք բերելու, հեռուստացույց ունենալու, բջջային հեռախոս ունենալու կամ բանտային հիվանդանոց տեղափոխվելու համար: Ըստ տարբեր պատմությունների բանտային հիվանդանոց տեղափոխվելու համար, որտեղ պայմաններն համեմատաբար լավ են, պահանջվում էր 500-ից 1000 ԱՄՆ դոլար կաշառք: Նախկին դատապարտյալների նկատմամբ ազատ արձակվելուց հետո ոստիկանության կողմից ոտնձգություններ են եղել՝ իրենց տարածքներում գողության ամեն դեպքից հետո ոստիկանները նրանց նկատմամբ ճնշում են գործադրել ու ենթարկել բռնությունների:

Հելսինկյան կոմիտեի զեկույցում նաև դիտարկվում էին քրեակատարողական հիմնարկների ծանր կենցաղային պայմանները: Որոշ դեպքերում 10-12 մահճակալով խցերում տեղավորում են 23-24 բանտարկյալների, և որոշ բանտարկյալներ քնում էին հատակին կամ աթոռների վրա: Հարցված 33 նախկին դատապարտյալներից 20-ի մոտ բանտարկության ժամանակահատվածում առողջական բարդություններ են ի հայտ եկել: Քրեակատարողական հիմնարկում սնունդն ուտելու ենթակա չէր և բանտարկյալներն ուտում էին ազգականների բերած ուտելիքը: Բանտարկյալները հիգիենայի պարագաները գնում կամ ստանում էին դրսից: Բուժծառայությունները վատ էին և բանտարկյալներին բուժօգնություն ցուցաբերվում էր միայն ծայրահեղ ծանր վիճակում գտնվելու դեպքում:

Մարտի 18-ին Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող դատապարտյալ Արթուր Այվազյանը բանտի անձնակազմի ոտնձգություններից հետո ինքնասպանության փորձ արեց՝ կտրելով երակները: Միջադեպից հետո քրեակատարողական հիմնարկի անձնակազմը հրաժարվեց թույլ տալ բուժանձնակազմի մուտքը խուց՝ օգնություն ցուցաբերելու նպատակով և նույն խցի բանտարկյալներից մեկը ստիպված էր կտրել իր երակները, որպեսզի Այվազյանի մոտ բուժաշխատողներ գային:

ՀԱՅԱՍՏԱՆ

Դատախազությունը մերժեց ինքնասպանության հասցնելու մեղադրանքով գործ հարուցելու վերաբերյալ Այվազյանի փաստաբանի միջնորդությունը:

2012թ. հոկտեմբերին Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն (ԽԿԿ) հրապարակեց զեկույց՝ նկարագրելով 2011թ. Կենտրոն ու Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկներ կատարած կրկնական այցերը: ԽԿԿ-ն պարզեց, որ ցմահ դատապարտվածների վերաբերյալ 2010թ. իրենց այցից հետո ներկայացրած առաջարկների մեծ մասն իշխանությունները չեն կատարել:

Վարչարարություն. Չեն եղել հաղորդումներ բռնություններ թույլ չտված հանցագործների հանդեպ այլընտրանքային պատիժների կիրառմանն ուղղված քայլերի վերաբերյալ, չնայած թույլատրվել է պատիժը կրելուց վաղաժամկետ և պայմանական ազատումը: Մարդու իրավունքների ակտիվիստները և փաստաբանները շարունակել են մտահոգություն հայտնել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ու պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով հանձնաժողովների գործունեության վերաբերյալ: Փաստաբանների պալատը, որը երկրի փաստաբանների միությունն է, բողոքում էր, որ հանձնաժողովները չունեն որոշումների ընդունման չափորոշիչներ և 2012թ. հունվարին հանձնաժողովների կազմից ետ կանչեց իր ներկայացուցիչներին: Բողոքարկման մեխանիզմների բացակայությունը և նաև հանձնաժողովների կազմում իրավապահ կառույցների ներկայացուցիչների ներկայացվածության բարձր աստիճանը շարունակում էին հանդիսանալ պատշաճ իրավական ընթացակարգերի խոչընդոտ: Ըստ Հելսինկյան կոմիտեի զեկույցի նախկին բանտարկյալները հավաստիացրել են, որ վաղաժամկետ ազատ արձակման համար բանտարկյալները պետք է նշանակալի կաշառք տային:

Չեն եղել հաղորդումներ բանտերում հաշվառման համակարգը բարելավելու վերաբերյալ:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված քրեակատարողական հիմնարկների հասարակական մշտադիտարկման խումբը շարունակել է Արդարադատության նախարարությանը զեկույցներ ներկայացնել դատապարտյալների առողջության վատթարացման վերաբերյալ, որոնք ըստ նրանց պնդումների շարունակում էին մնալ բանտում՝ չնայած բավարարում էին առողջական վիճակից ելնելով վաղաժամկետ ազատ արձակվելու պահանջներին: Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովը, որ պատասխանատու էր առողջական պատճառներով բանտարկյալների վաղաժամկետ ազատ արձակելու հարցը քննարկելու համար, չափազանց դանդաղ էր գործողություններ ձեռնարկում և չուներ գործողությունների սահմանված ընթացակարգեր:

Բանտերը չունեին օմբուդսմեն:

Իրավապաշտպան կազմակերպությունները և օմբուդսմենը շարունակել են մտահոգություն հայտնել առ այն, որ դատապարտյալներն ու կալանավորները միշտ չէ որ ապահովվում են տեսակցության ողջամիտ հնարավորություններով, քանի որ գերբնակեցված պայմանների և համապատասխան վայր չլինելու պատճառով նրանք զրկվում էին նույնիսկ տեսակցությունների սահմանված նվազագույն իրավունքից: Բանտարկյալներին թույլ էր տրվում հետևել կրոնական ծիսակարգերին:

Իրավասու մարմինները միշտ չէ, որ թույլ են տվել բանտարկյալներին և կալանավորներին իշխանություններին ներկայացնել անմարդկային պայմանների մասին արժանահավատ բողոքներ առանց գրաքննության, թեպետ այս կարգի գրաքննության տարածվածությունը հայտնի չէ: Օրենքի համաձայն նախնական կալանքի տակ գտնվողների նամակագրությունը կարող է գրաքննության ենթարկվել միայն դատարանի որոշումով: Այնուհանդերձ, ըստ իրավապաշտպան կազմակերպությունների եղել են բազմաթիվ դեպքեր, երբ դատապարտված անձանց նամակները քրեակատարողական հիմնարկի վարչական անձնակազմի կողմից գրաքննության են ենթարկվել առանց դատական վերահսկողության: Ըստ իրավապաշտպան ՀԿ-ների իրավասու մարմինները չեն հետաքննել անմարդկային պայմանների վերաբերյալ հնչեցված արժանահավատ մեղադրանքները:

ՀԱՅԱՍՏԱՆ

Բանտային պայմանների մասին Հայաստանի հելսինկյան կոմիտեի զեկույցի համաձայն բանտարկյալները կարող էին առանց գրաքննության նամակներ ուղարկել, եթե կաշառք տային:

Անկախ մշտադիտարկում. Իրավասու մարմիններն ընդհանուր առմամբ թույլատրել են տեղական և միջազգային իրավապաշտպան խմբերին, այդ թվում ԽԿԿ-ին իրականացնել բանտերի և կալանավայրերի պայմանների մշտադիտարկում: Նրանք կարող էին առանձնազրույցներ ունենալ բանտարկյալների հետ: Իրավասու մարմինները թույլատրել են Կարմիր խաչի միջազգային կոմիտեին այցելել բանտեր և նախնական կալանքի կենտրոններ:

դ) Կամայական ձերբակալություն կամ կալանավորում

Օրենքով արգելվում է կամայական ձերբակալումը և կալանավորումը: Թեպետ իրավասու մարմիններն ընդհանուր առմամբ հետևել են դատական որոշում ստանալու օրենքի պահանջին, սակայն դատավորները հաճախ չեն կամենում վիճարկել անձանց կալանավորելու մասին դատախազների միջնորդությունները կամ քննել ոստիկանների պահվածքը ձերբակալություններ կատարելիս:

Ոստիկանության և անվտանգության համակարգի դերը

Ազգային ոստիկանությունը պատասխանատու է ներքին անվտանգության համար, մինչդեռ Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) պատասխանատու է ազգային անվտանգության, հետախուզական գործունեության, սահմանային հսկողության համար. երկու կառույցների ղեկավարներն էլ նշանակվում են նախագահի կողմից և հաշվետու են ուղղակիորեն նախագահին:

Ոստիկանությունն ու Ազգային անվտանգության ծառայությունը դեռևս չունեն համապատասխան պատրաստվածություն, ռեսուրսներ և սահմանված ընթացակարգեր չարաշահումները կանխարգելելու համար: Խնդրահարույց էր անպատժելիությունը. չկար ոստիկանության չարաշահումները քննելու առանձնացված անկախ մեխանիզմ: 2012թ. հուլիսին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն մտահոգություն հայտնեց իրավապահների կողմից անհամաչափ խիստ ուժի գործածման պարագայում պատասխանատվության ու ոստիկանության չարաշահումների քննության անկախ մեխանիզմի բացակայության վերաբերյալ:

Քաղաքացիները կարող են ոստիկանության դեմ դատական հայց ներկայացնել, սակայն այս միջոցը սահմանափակ է: Նախքան դատը մեղադրյալներն օրինական իրավունք ունեն բողոք ներկայացնել քրեական գործի քննության ընթացքում իրավապահների կողմից իրենց հանդեպ թույլ տված բռնությունների վերաբերյալ, բայց պետք է ոստիկանությունից կամ դատախազությունից բժշկական փորձաքննության թույլտվություն ստանան, որն անհրաժեշտ է ֆիզիկական բռնության մեղադրանքն օրինականորեն հաստատելու համար: Իրավապաշտպան կազմակերպությունները շարունակել են հայտնել, որ իրավասու մարմինները հազվադեպ են այդպիսի թույլտվություն տվել կամ ձգձգել են այնքան, երբ բռնության հետքերն այլևս տեսանելի չեն եղել: ՀԿ-ների հաղորդմամբ դատավորները սովորաբար անտեսել են մեղադրյալների այն պնդումները, թե ցուցմունքն իրենցից կորզվել է ֆիզիկական բռնությունների միջոցով:

Շարունակում էր խնդրահարույց մնալ կոռուպցիան և անպատժելիություն իրավապահ համակարգում:

Մարտի 5-ին Իրավունքի Եվրոպա միավորում ու Թրանսփերենսի Ինթերնեյշնլ կազմակերպությունները համատեղ հայտարարություն տարածեցին, որով դատապարտում էին Հատուկ քննչական ծառայությանը (ՀՔԾ) նախագահական ընտրությունների միջազգային դիտորդ Նարինե Էսմաելիի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի համար: Փետրվարի 18-ին Արտաշատի ընտրատեղամասերից մեկում նախագահական ընտրությունների դիտարկման ժամանակ Էսմաելին ընտրակեղծիքի ականատես էր եղել և հարձակման էր ենթարկվել: Նրա ցուցմունքի հիման վրա

ՀԱՅԱՍՏԱՆ

Սահմանադրական դատարանը չեղյալ համարեց այդ ընտրատեղամասի ընտրության արդյունքները: Ըստ ՀԿ-ների ու ԶԼՄ-ների հաղորդումների՝ հարձակման ու ընտրակեղծիքի հետաքննության ողջ ընթացքում ՀՔԾ քննիչ Գորիկ Հովակիմյանը և ՀՔԾ պետ Անդրանիկ Միրզոյանն ագրեսիվ վերաբերմունք են ցուցաբերել Էսմաելիի ու նրա փաստաբանի հանդեպ: Ի հեռուկս Սահմանադրական դատարանի որոշման, հուլիսի 26-ին դատարանն արդարացրեց գործով միակ կասկածյալ Արտաշատի քաղաքապետի որդի Սերգեյ Մանուկյանին այն բանից հետ, երբ դատախազը նրա նկատմամբ մեղադրանքը հանեց: Մայիսի 2-ին նախագահը Միրզոյանին ազատեց զբաղեցրած պաշտոնից, որն ըստ հաղորդումների պայմանավորված էր այս գործի հետ կապ չունեցող այլ կոնկրետ քրեական գործով անօրինական գործողություններ թույլ տալու ու իր առաջ դրված խնդիրները չկատարելու հանգամանքով:

Խնդրահարույց էր օրենքի ընտրովի կիրառումն ու անպատժելիությունն ազդեցիկ պաշտոնյաների հետ կապված գործերի առնչությամբ: Տարվա ընթացքում բազմաթիվ դրվագներով իրավապահները հրաժարվեցին դատական կարգով հետապնդում իրականացնել մեծ հնչեղություն ունեցող գործերով, որոնցով անցնում էին իշխանությունների հետ կապ ունեցող անձինք, կամ էլ նման գործերով դատարանների կողմից կայացվում էին մեղմ վճիռներ:

Հունիսի 2-ին Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի տան մոտակայքում տեղի ունեցած փոխհրաձգության ժամանակ սպանվեց Ավետիք Բուդաղյանը, ծանր մարմնական վնասվածքներ ստացան նրա եղբայր, զինվորական հրամանատար Արտակ Բուդաղյանը և Խաչատրյանի թիկնապահ Նիկոլայ Աբրահամյանը: Կարճ ժամանակ անց ոստիկանությունը սպանության մեղադրանքով ձերբակալեց Խաչատրյանի որդուն՝ Տիգրան Խաչատրյանին և Խաչատրյանի թիկնապահներից մեկին՝ Զարզանդ Նիկողոսյանին: Ոստիկանությունը մարզպետի տնից մեծ քանակությամբ զենք և զինամթերք առգրավեց: Սուրիկ Խաչատրյանը, որ հրաժարական տվեց ձերբակալություններից հետո, պնդում էր, որ փոխհրաձգության ժամանակ ինքը քնած է եղել: Հունիսի 5-ին՝ նախքան քննության ավարտը, այն ժամանակ զինվորական դատախազ Գևորգ Կոստանյանը հրապարակավ հայտարարեց, որ մարզպետը դեպքի վայրում չի եղել և ակնարկեց, որ միջադեպը տեղի է ունեցել մարզպետի տան վրա զինված հարձակում գործելու արդյունքում: Սեպտեմբերի 7-ին պաշտպանության նախարարությունը հայտարարեց, որ հանում է բոլոր մեղադրանքները Տիգրան Խաչատրյանի ու Զարզանդ Նիկողոսյանի վրայից, քանզի նրանց գործողությունները հանդիսացել են ինքնապաշտպանություն: Ըստ Բուդաղյանի փաստաբանի իրավասու մարմինների այդ որոշումը հիմնված էր բացառապես կասկածյալների ու Խաչատրյանի ընտանիքի ցուցմունքների վրա: Բուդաղյանին մեղադրանք առաջադրվեց սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքի համար: Ըստ Բուդաղյանի փաստաբանի քննիչները նախաքննությունն այնպես ուղղորդեցին, որ Խաչատրյան ընտանիքը որևէ պատասխանատվություն չկրի:

Ձերբակալության ընթացակարգեր և վերաբերմունքը կալանքի ընթացքում

Իրավասու մարմինները ժամանակ առ ժամանակ քրեական հանցանքների մեջ կասկածվողներին ձերբակալել են առանց կարգադրագրի և առանց ողջամիտ կասկածի: Օրենքի համաձայն քննություն իրականացնող մարմինն անձին բերման ենթարկելուց հետո երեք ժամվա ընթացքում պարտավոր է կամ պաշտոնապես ձերբակալել այդ անձին, կամ ազատ արձակել: Անձին արգելանքի վերցնելուց հետո 72 ժամվա ընթացքում քննություն իրականացնող մարմինը պարտավոր է կամ ազատել ձերբակալված անձին, կամ մեղադրանք առաջադրել և կալանքի տակ պահելու կարգադրագիր ստանալ դատավորից: Դատավորները հազվադեպ են մերժում ոստիկանության կալանքի կարգադրագրի հայտերը: Ոստիկանությունը պարբերաբար անձանց կանչել և պահել է երեք ժամից ավել առանց նրանց պաշտոնապես ձերբակալելու, այն պատրվակով, որ նրանք գործով անցնող վկաներ են և ոչ կասկածյալներ: Տեղական դիտորդները պնդել են, որ ոստիկանությունը խուսափում էր

նրանց կասկածյալներ որակելուց, որպեսզի շրջանցի նրանց կասկածյալի կարգավիճակից բխող իրավունքներ ապահովելու իրավական պահանջը:

Օրենքը ոստիկանությունից պահանջում է տեղեկացնել արգելանքի վերցված անձանց լռություն պահպանելու, հեռախոսազանգ կատարելու և ձերբակալության պահից սկսած փաստաբանի կողմից ներկայացված լինելու իրավունքների մասին: Անվճարունակ լինելու դեպքում արգելանքի վերցված անձն օրենքով իրավասու է ունենալ հանրային պաշտպան: Ոստիկանությունը հաճախ մինչև մեղադրանք առաջադրելը և առանց փաստաբանի ներկայության հարցաքննել ու ճնշում է գործադրել արգելանքի վերցված անձանց վրա հանցանքները խոստովանելու նպատակով: Ըստ հասարակական դիտորդական խմբի ներկայացուցիչների կալանավորվածներից քչերն են իմացել փաստաբան ունենալու իրենց իրավունքի մասին: Մարդկանց պահելը որպես «գործով անցնող վկաների»՝ նախքան նրանց կասկածյալ որակելը, հանգեցրել է այն փաստին, որ իրավասու մարմիններն այդ անձանց հարցաքննել են առանց փաստաբանի:

2012թ. հուլիսին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն քննադատեց նախնական կալանքի հաճախակի օգտագործումը և նշեց, որ նախնական կալանքի տակ գտնվող անձինք լիովին տեղեկացված չեն եղել իրենց իրավունքների մասին և հաճախ նրանք զրկված են եղել ժամանակին փաստաբանի ու բժշկի ծառայություններից օգտվելու հնարավորությունից: Կոմիտեն նշեց, որ կալանքի տակ վերցված անձանց իրավասու մարմինները շուտափույթ դատարանի առջև չեն կանգնեցրել:

Հասարակական դիտորդական խմբի 2012թ. զեկույցի համաձայն ոստիկանություն բերման ենթարկված անձանց մեկ երրորդին նախքան պաշտոնապես ձերբակալելը պահել են 4-52 ժամ: Ըստ զեկույցի ոստիկանության կալանախցերում գտնվողների, այդ թվում նախնական կալանքի տակ գտնվողների միայն 10.4 տոկոսն են օգտվել փաստաբանի ծառայություններից:

Օրենքը նախատեսում է գրավի համակարգ, սակայն դատարանները հիմնականում մերժում են գրավի հայտերը և կարգադրում երկարացնել մեղադրյալների նախնական կալանքը: Որոշ դեպքերում իրավասու մարմինները նախքան դատը մեղադրյալին ազատ են արձակվել ստորագրությամբ՝ պարտավորեցնելով երկրի, որոշ դեպքերում քաղաքի սահմաններից չբացակայել և հանձնել անձնագիրը:

<u>Կամայական ձերբակալություն</u>. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի աշխատանքային խումբն իր 2011թ. հրապարակած զեկույցում նշում էր, որ ոստիկանությունը, Ազգային անվտանգության ծառայությունն ու սահմանապահները հաճախ արգելանքի տակ են վերցրել կամ ձերբակալել են մարդկանց՝ առանց ձերբակալության կարգադրագրի: Ձերբակալությունները հաճախ եղել են ոչ թե քննությունների հետևանք, այլ ավելի շատ մարդիկ կալանվել են քննություն սկսելու նպատակով, հաճախ այն ակնկալիքով, որ կասկածյալը կխոստովանի և կվերանա հետագա քննության անհրաժեշտությունը:

<u>Նախնական կալանքի տակ գտնվողներ</u>. Նախնական կամ որպես խափանման միջոց կիրառվող կալանքի երկար տևողությունը շարունակել է հանդիսանալ քրոնիկ խնդիր: Ըստ պաշտոնական տեղեկատվության տարվա առաջին ինն ամիսների ընթացքում քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց միջին հաշվով 6.7 տոկոսը եղել են նախնական կալանքի տակ գտնվողները, և ևս 9.6 տոկոս եղել են կալանավորված անձիք, որոնց դատաքննությունը եղել է ընթացքի մեջ:

Փաստաբանները և դատական դիտորդները դժգոհում էին, որ թեպետ օրենքը պահանջում է, որ կալանքի վերաբերյալ որոշումները լինեն ողջամիտ, և որ կալանքը դիտարկվի որպես ծայրահեղ միջոց, գործնականում կալանքի մասին որոշումները դատարանների կողմից հաճախ հաստատվում են ավտոմատ կերպով՝ հաշվի չառնելով, թե արդյոք սահմանափակման ավելի նվազ աստիճան ունեցող միջոցները կարող են բավարար լինել: Կալանքի չափից ավել օգտագործումն առկա էր նաև

անչափահաս իրավախախտների դեպքում: Անչափահաս իրավախախտների հետ կապված չկար առանձին արդարադատության համակարգ:

Թեպետ օրենքը պահանջում է լավ պատճառաբանված հիմնավորվում կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամիսը մեկ երկարաձգելու համար, դատավորները հաճախ երկարաձգել են կալանքն անհասկանալի հիմքերով: Իրավասու մարմինները հիմնականում հարգել են օրենքի այն դրույթը, որով նախնական կալանքը չպետք է գերազանցի 12 ամիսը: Սակայն օրենքը չի սահմանափակում այն ժամկետը, թե մեղադրյալն ինչքան կարող է մնալ կալանքի տակ գործը դատախազի կողմից դատարան ուղարկելուց հետո: Ըստ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի աշխատանքային խմբի 2011թ. զեկույցի դատախազները հաճախակի դիմում են դատավորներին դատաքննությանը պատրաստվելու համար լրացուցիչ ժամանակ ունենալու համար դատը հետաձգելու, այսինքն՝ քննությունների տևողության ավելացնելու միջնորդությամբ, ինչը բավարարվում է: Դատախազները դատական լսումները հետաձգելու համար պատասխանատվությունը դնում են դատապաշտպանների և նրանց՝ պաշպանությանը նախապատրաստվելու համար լրացուցիչ ժամանակ տրամադրելու միջնորդությունների վրա:

Համաներում. Հոկտեմբերի 3-ին Ազգային ժողովն ընդունեց նախագահի կողմից առաջարկված ընդհանուր համաներումը, որի արդյունքում հոկտեմբերի 18-ին քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակվեցին 558 դատապարտյալներ:

ե) Արդար հրապարակային դատաքննության իրավունքի մերժում

Օրենքը նախատեսում է անկախ դատական համակարգ: Գործնականում դատարանները շարունակում էին ենթարկվել գործադիր իշխանության քաղաքական ճնշումներին, ինչպես նաև կար ակնկալիք, որ դատավորները մեղավոր են ճանաչելու գրեթե բոլորին, ում առաջադրվում է մեղադրանք: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 2011թ. զեկույցի համաձայն կոռուպցիայի դեմ ուղղված կառավարության պայքարը նաև բացասական ազդեցություն է ունեցել դատավորների անկախության վրա, քանի որ նրանք կարծես թե հակված են խիստ պատիժներ սահմանել՝ վախենալով որ մեղմ մոտեցման ցանկացած նշան կարող է կասկածի տեղիք տալ առ այն, որ իրենք կաշառք են վերցրել:

Դատական համակարգն անկախ չէր, իսկ դատավորները չունեին արդյունավետ իրավական միջոցներ, եթե գործադիր, օրենսդիր կամ վերադաս դատական մարմինները որոշում էին պատժել իրենց: Դատավորների պաշտոնանկ արվելու վտանգը՝ այդ կարգի վերաբերմունքին արձագանքելու արդյունավետ իրավական միջոցների բացակայության ու կենսաթոշակ ստանալու հետ կապված անորոշության հետ մեկտեղ, ուժեղ սթափեցնող ազդեցություն ունեին դատական համակարգի ու դրա անկախության վրա:

Արդարադատության խորհուրդը, որտեղ նախագահում է վճռաբեկ դատարանի նախագահը, նշանակում և ազատում է դատավորներին և կարող է դատավորին մեղադրել սխալ վճիռ կայացնելու մեջ, նույնիսկ եթե վճիռը որևէ վերադաս դատարանում երբևէ չի բողոքարկվել կամ վերաքննիչ դատարանների կողմից որոշման մեջ որևէ սխալներ չեն հայտնաբերվել: Արդարադատության խորհրդի որոշումները վերանայման ենթակա չեն: Եղել են հաղորդումներ, որ Վճռաբեկ դատարանը ստորին ատյանի դատավորներին թելադրել է բոլոր նշանակալի գործերի ելքերը: Օմբուդսմենի հունվարյան հայտարարության համաձայն դատավորները կարող են անտեսել օրենքը, Սահմանադրական դատարանի որոշումները, միջազգային իրավունքի նորմերը, սակայն ոչ երբեք Վճռաբեկ դատարանի ներքին, հաճախ անօրինական, հրահանգները: Ըստ դիտորդների Վճռաբեկ դատարանի վերահսկողությունը դատավճիռների նկատմամբ շարունակում էր մնալ որպես դատական անկախության վրա ազդող համապարփակ խնդիր:

ՀԱՅԱՍՏԱՆ

Տարվա ընթացքում առաջընթաց չի արձանագրվել նախկին դատավոր Սուրիկ Ղազարյանի կողմից իր կենսաթոշակը վերականգնելու գործում: 2011թ. Վճռաբեկ դատարանի նախագահ Արման Մկրտումյանն ըստ վստահելի հաղորդումների ստիպեց աշխատանքից դուրս գալ դատավոր Սուրիկ Ղազարյանին և նրան մերժեց դատավորի ամբողջական կենսաթոշակի նշանակումը՝ որպես հաշվեհարդար այն բանի համար, որ 2010թ. կարևոր նշանակություն ունեցող մի գործով, որի կողմերն էին Յուկոս Օյլ ընկերությունն ու Ռոսնեֆտ ընկերությունը (Ռուսաստանի պետական նավթային ընկերություն), վճիռ կայացնելիս չի խորհրդակցել Վճռաբեկ դատարանի հետ: Վճիռը Յուկոս Օյլ ընկերության օգտին էր:

Տարվա ընթացքում դեռ ընթացքի մեջ էր քրեական գործն ընդդեմ Յուկոս ԱՊՀ ՍՊԸ-ի (ռուսական Յուկոս Օյլ ընկերության հայաստանյան մասնաճյուղի) նախկին տնօրեն Արմեն Միքայելյանի դեմ, ով մեղադրվում էր առևտրային կամ այլ կազմակերպությունների աշխատողներին տված լիազորությունները չարաշահելու մեջ: Ըստ վստահելի աղբյուրների Միքայելյանին մեղադրանք է ներկայացվել ուղղակիորեն ռուսական Ռոսնեֆտ ընկերության պահանջով, որպեսզի Միքայելյանի նկատմամբ ճնշում կիրառվի և նա աջակցի Յուկոս ԱՊՀ ՍՊԸ-ի ակտիվները կլանելու Ռոսնեֆտի ջանքերին:

Իրավասու մարմիններն ընդհանուր առմամբ կատարել են դատական կարգադրագրերը:

Դատաքննությունները սովորաբար բավարարել են արդարության ընթացակարգային ստանդարտներից շատերին: Դրանք հաճախ անարդարացի են եղել էությամբ, քանի որ շատ դատավորներ իրենց հարկադրված են զգում աշխատել դատախազների հետ՝ հասնելու դատապարտման: Դատավորները չեն կամեցել կասկածի տակ դնել ոստիկանության փորձագետների եզրակացությունները կամ պահանջել մեղադրող կողմից ներկայացնել մեղքի համարժեքորեն բարձր մակարդակի ապացույցներ, դրանով իսկ խոչընդոտելով մեղադրյալի պատշաճ պաշտպանության հնարավորությունը:

Դատաքննություն

Օրենքով սահմանվում է անմեղության կանխավարկածը, սակայն իրավասու մարմինները չեն հարգել այս իրավունքը: Օրենքով պահանջվում է, որ հիմնականում դատական լսումները լինեն դռնբաց, սակայն առանձին դեպքերում, մասնավորապես՝ «հանրության բարքերի», պետական անվտանգության կամ «մասնակիցների անձնական կյանքի պաշտպանության» շահերից ելնելով լինում են բացառություններ: Դատավարությունների ժամանակ չկան երդվյալ ատենակալներ: Առաջին ատյանի դատարաններում դատավճիռ կայացվում է մեկ դատավորի կողմից (բացի այն դեպքերից, երբ հանցանքի համար կարող է սահմանվել ցմահ բանտարկություն), իսկ ավելի բարձր ատյանի դատարաններում՝ դատավորների խորհրդի կողմից: Մեղադրյալներն ունեն իրենց ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք, իսկ պետությունը պարտավոր է մեղադրյալներին փաստաբան առաջարկել, եթե նրանք դա պահանջում են: Փաստաբանների թվի սղության պատճառով հաճախ այս պարտավորությունը Երևանից դուրս չի ապահովվել, չնայած 2012թ. հանրային պաշտպանների թիվը 32-ից դարձավ 52:

Օրենքի համաձայն մեղադրյալները կարող են պահանջել առերեսում վկաների հետ, ներկայացնել ապացույցներ, ծանոթանալ գործի նյութերին նախքան դատավարությունը, սակայն մեղադրյալներն ու նրանց փաստաբանները շատ սահմանափակ հնարավորություն են ունեցել առարկություններ ներկայացնելու պետական մեղադրողի կողմից ներգրավված վկաներին: Սա հատկապես սահմանափակում է այն մեղադրյալներին, ովքեր վիճարկում են ոստիկանության կողմից ձեռք բերված ապացույցները, քանի որ օրենքի համաձայն ոստիկաններին արգելվում է ի պաշտոնե ցուցմունք տալ, եթե նրանք չեն հանդիսանում գործով վկա կամ տուժող: Դատարաններում հանցանքի վայրում հայտնաբերված իրեղեն ապացույցների կամ մեղադրյալի խոստովանության մասին ոստիկանության

պաշտոնական հաշվետվությունները սովորաբար ընդունվել են որպես ապացույց՝ առանց դատարանում դրանց վերաբերյալ ոստիկանական ցուցմունքների: Պաշտպանությունը ներկայացնող փաստաբաններն այս պաշտոնական հաշվետվությունները վիճարկելու հնարավորություն համարյա չեն ունենում, և դատարանները դրանք հիմնականում համարում են անառարկելի: Դատավորները վերահսկում էին «վկաների ցանկը», որով որոշվում էր, թե որ վկաներն են գործից բխող ապացույցներ տիրապետել: Պաշտպանությունը ներկայացնող փաստաբանները բողոքում էին, որ երբեմն դատավորներն իրենց թույլ չեն տվել կանչել կամ դատավարությանն ապահովել այնպիսի վկաների ներկայացումը, որոնք իրենց գնահատմամբ ունեին ապացույցներ, որ կարող էին օգտակար լինել իրենց պաշտպանյալի համար: Մեղադրյալները, դատախազները և տուժող կողմն ունեն բողոքարկման իրավունք և դրանից հաճախ են օգտվում:

Հունիսի 10-ին մոտ 200 փաստաբաններ երկօրյա բողոքի գործադուլ արեցին Վճռաբեկ դատարանի, իրենց բնորոշմամբ, կամայական որոշումների ընդունման դեմ: Փաստաբանները քննադատում էին առանց հիմնավոր բացատրության իրենց քրեական ու քաղաքացիական գործերով բողոքարկումների ճնշող մեծամասնությունը վարույթ չընդունելու վերաբերյալ դատարանի որոշումները:

Դատարան ուղարկված քրեական գործերի ճնշող մեծամասնությունն ավարտվել են դատապարտումներով: Չնայած բազմաթիվ թույլ գործեր ավարտվում են դատապարտմամբ, այնուամենայնիվ դատապարտումների բարձր ցուցանիշը նաև կարող է վերագրվել ոստիկանության այն պրակտիկային, որ քննիչները հրաժարվում են դատարան ուղարկել թույլ գործեր: Տարվա առաջին ինն ամիսների ընթացքում արդարացման վճիռ է կայացվել լսված գործերի 1.6 տոկոսի վերաբերյալ:

Քաղաքական բանտարկյալներ և կալանավորվածներ

Տարվա ընթացքում մարդու իրավունքների տեղական դիտորդները պնդում էին, որ ոստիկանների հետ 2011թ. բախում ունեցած ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսի չորս ակտիվիստների համար նշանակված անսովոր խիստ դատավճիռները քաղաքական շարժառիթներ ուներ: Տարեվերջի դրությամբ դատական իշխանությունները համաներում կիրառեցին Արտակ Կարապետյանի և Տիգրան Առաքելյանի նկատմամբ, և սահմանեցին մեկ տարի փորձաշրջանով երկու տարվա պայմանական ազատազրկում Դավիթ Քիրամիջյանի ու Սարգիս Գևորգյանի համար:

Քաղաքացիական դատավարություն ու դատական պաշտպանության միջոցներ

Թեպետ քաղաքացիները մարդու իրավունքների ոտնահարման դեպքում վնասի փոխհատուցման կամ ոտնահարումը դադարացնելու հայցերով իրավասու են դիմել դատարաններ, սակայն դատարանները լայնորեն ընկալվում են որպես կոռումպացված կառույց: Քաղաքացիները կարող են նաև դիմումներ ու բողոքները ներկայացնել Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) գրասենյակ, ինչպես նաև վիճարկել օրենսդրության սահմանադրականությունը Սահմանադրական դատարանում: Տարվա ընթացքում Սահմանադրական դատարանը տասնյակ գործերով որոշումներ է կայացրել օրենքների սահմանադրականության վերաբերյալ, սակայն ստորին ատյանի դատարանների կողմից այդ որոշումների իրականացումը եղել է անհամաչափ, քանի որ նրանց վերադաս կառույցը Վճռաբեկ դատարանն է, և ոչ թե Սահմանադրական դատարանը:

<u>Մարդու իրավունքների տարածաշրջանային դատարանների որոշումներ</u>. Տեղում իրավական կարգավորման միջոցները սպառելուց հետո քաղաքացիները պետության կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված իրավունքների հնարավոր խախտումների վերաբերյալ իրենց գանգատները կարող են ներկայացնել ՄԻԵԴ: Տարեվերջի դրությամբ տասնյակ գանգատներ դատարանի կողմից դեռ լուծված չէին: Նոյեմբերի 18-ի դրությամբ ՄԻԵԴ-ը երկրի հետ կապված 2 գործերով որոշում է կայացրել է, որոնցից մեկով արձանագրել է կոնվենցիայով սահմանված իրավունքների խախտում պետության կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆ

Պետությունն ընդհանուր առմամբ կատարում է ՄԻԵԴ-ի վճիռները դրամական փոխհատուցումների մասով: Պետությունը չի վերաբացում այն գործերը, որոնցով ՄԻԵԴ-ը վճիռներ է կայացրել, իսկ դատարանները հաճախ չեն հետևում կիրառելի ՄԻԵԴ նախադեպերին:

զ) Կամայական միջամտություն անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի անձեռնմխելիության կամ նամակագրության գաղտնիության նկատմամբ

Սահմանադրությամբ արգելվում են չարտոնված խուզարկությունները և ամրագրվում է քաղաքացիների անձնական կյանքի և հաղորդակցության գաղտնիությունը: Այնուհանդերձ եղել են չհաստատված հաղորդումներ այն մասին, որ իրավապահ մարմինները որոշ անձանց, ում իշխանությունները ցանկացել են ուշադրության կենտրոնում պահել (այդ թվում՝ մարդու իրավունքների ակտիվիստներ և քաղաքական ընդդիմության ներկայացուցիչներ), հեռախոսային խոսակցությունները գաղտնալսել են և հետևել են նրանց էլեկտրոնային փոստի նամակագրությանը:

Իրավապահ մարմինները չեն կարող օրինականորեն հեռախոսային խոսակցությունները լսել, նամակագրությանը հետևել կամ խուզարկություն կատարել, եթե դատավորից նման թույլտվություն չունեն: Իրավապահ մարմիններն ընդհանուր առմամբ հետևել են այս իրավական ընթացակարգին, սակայն մարդու իրավունքների հարցերով դիտորդները նշում են, որ եղել են դեպքեր, երբ հետախուզման մեջ գտնվող մարդկանց բացահայտելու պատրվակով ոստիկանությունն առանց կարգադրագրի խուզարկություններ է անցկացրել: Ըստ փաստաբանների դատավորները հաճախ գաղտնալսման, նամակագրությանը հետևելու ու խուզարկության թույլտվությունները շնորհելիս չեն պահանջում ներկայացնել հանցավոր գործունեության հիմնավոր ապացույցներ, ինչը պահանջվում է օրենքով՝ ընդհանուր առմամբ սահմանված իրավական ընթացակարգը դարձնելով սոսկ ձևականություն:

ՄԱՍ 2. ՀԱՐԳԱՆՔ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

ա) Խոսքի և մամուլի ազատություն

Գործնականում կառավարությունը միշտ չէ, որ ապահովել է այս իրավունքները: Զանգվածային լրատվամիջոցները, այդ թվում տպագիր, առցանց և հեռարձակող լրատվամիջոցները կամ վերահսկվել են կառավարության կողմից, կամ ընդհանուր առմամբ հայտնել են իշխանահաճո դիրքորոշումներ: Եղել են բռնության բազմակի միջադեպեր լրագրողների նկատմամբ՝ կապված փետրվարի 18-ի նախագահական և մայիսի 5-ի տեղական ընտրությունների, տարվա ընթացքում քաղաքացիների բողոքի ակցիաների հետ:

<u>Խոսքի ազատություն</u>. Հունիսի 10-ին կառավարամետ Շանթ հեռուստաընկերությունն աշխատանքից հեռացրեց լուրերի հաղորդավար Արմեն Դուլյանին այն բանից հետո, երբ նա իր ֆեյսբուքյան գրառման մեջ զուգահեռներ անցկացրեց Ռուսաստանի ու Հայաստանի լրատվական դաշտի միջև՝ ակնարկելով, որ երկու երկրների իշխանություններն էլ վերահսկում են հեռուստակայանների մեծ մասը: Աշխատանքից հեռացնելով Դուլյանին՝ Շանթ հեռուստաընկերությունը հայտարարեց, որ նրա հետ հետագա համագործակցությունն անընդունելի է՝ հաշվի առնելով ընկերության հանդեպ նրա ցուցաբերած վերաբերմունքը: Բազմաթիվ լրագրողներ քննադատեցին աշխատանքից հեռացնելու փաստը՝ նշելով, որ միջադեպը կարծես թե հիմնավորում է այն մեղադրանքները, որ Շանթ հեռուստաընկերությունը վերահսկվում է կառավարության կողմից և անհանդուրժող է ազատ խոսքի ու մտածողության նկատմամբ:

<u>Մամուլի ազատություն.</u> Բացառությամբ փետրվարի նախագահական ու մայիսի տեղական ընտրությունների նախընտրական քարոզչության չորս-շաբաթյա պաշտոնական ժամանակաշրջանի,

երբ հեռարձակող լրատվամիջոցներն ապահովում էին բազմազան ու օբյեկտիվ լուսաբանում, ավանդական ԶԼՄ-ները հիմնականում չեն ապահովել քաղաքական բազմակարծություն ու օբյեկտիվ լուսաբանում:

Լրագրերի շրջանառությունը շարունակում էր մնալ սահմանափակ: Լրագրերի գերակշիռ մասը մասնավոր անձանց կամ խմբերի են պատկանում, բացառությամբ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի ու դրա ռուսալեզու «Ռեսպուբլիկա Արմենիի» հրատարակության: Տպագիր լրատվամիջոցների մեծ մասը հակված են եղել արտացոլել իրենց սեփականատերերի կամ ֆինանսական հովանավորների քաղաքական դիրքորոշումները, որոնք հաճախ իշխանական օղակներին մոտ կանգնած անձինք են: Այս հրատարակությունները ֆինանսավորող քաղաքական խմբավորումներն ու տնտեսական շահեր ներկայացնող խմբերն առանձնակի հետաքրքրություն չեն ցուցաբերում արդարացի ու հավասարակշված համապետական լուսաբանում զարգացնելու մեջ: Միայն սակավաթիվ լրագրեր են, որ գործել են որպես արդյունավետ և ինքնածախսածածկվող ընկերություններ:

Հեռարձակվող լրատվամիջոցները, հատկապես հանրային հեռուստատեսությունը շարունակում էր մնալ որպես նորությունների ու տեղեկատվության ստացման առաջնային աղբյուր ազգաբնակչության մեծ մասի համար: Շարունակել է սահմանափակ մնալ երկրի 20 ռադիոկայանների լսարանը, որոնցից երեքը հանրային ռադիոկայաններ են, իսկ մեկը հեռարձակվում է արտերկրից: Տարվա ընթացքում գործող 97 հեռուստաընկերությունները, բացի երեք հեռուստաընկերություններից, մասնավոր էին, իսկ սրանց մեծ մասը մարզերում տեղակայված փոքր տեղական հեռարձակողներն էին: Չորս հեռուստաընկերություններ իրականացնում էին վերահեռարձակում արտերկրից: Հեռարձակող լրատվամիջոցների մեծ մասը պատկանում էին իշխանական կուսակցության քաղաքական գործիչներին կամ քաղաքական կապեր ունեցող գործարարներին և ներկայացնում էին դեպքերի միակողմանի լուսաբանում: Մարզային հեռուստաընկերությունները ներկայացնում էին որոշակի այլընտրանքային տեսակետներ, սովորաբար արտաքին արտադրության նյութերի միջոցով:

Իշխանությունները տարվա ընթացքում չհրապարակեցին խոստացված Հայաստանի ռադիոհեռուստատեսային հաճախականությունների մասին աուդիտի տվյալները, որի հիման վրա տեխնիկապես հիմնավորվել էր թվային հեռարձակման լիցենզիաների թվի սահմանափակումը, երբ 2015թ. անցում կատարվի անալոգային համակարգից դեպի հեռարձակման թվային համակարգ: Հունիսի 19-ին Ազգային ժողովն ընդունեց հեռուստատեսության ու ռադիոյի մասին օրենքի փոփոխությունները, որոնցով անալոգային հեռարձակման կասեցումը, որը նախապես պլանավորվում էր 2015թ. հունվարի 1-ից, հետաձգվեց վեց ամսով:

Առցանց լրատվամիջոցները եղել են երկրի այլընտրանքային լրատվության առաջնային աղբյուրը և ի տարբերություն հեռարձակող լրատվամիջոցների ներկայացրել են բազմազան քաղաքական դիրքորոշումներ: Իշխանություններն ընդհանուր առմամբ դրանց բովանդակությունը չեն վերահսկել. այնուհանդերձ, հեռարձակումներն հաճախ արտացոլել են հովանավորների ու գովազդատուների քաղաքական ազդեցությունը: Եղել են արժանահավատ հաղորդումներ առ այն, որ և առցանց, և հեռարձակող լրատվամիջոցները շարունակաբար կենտրոնացել են իշխանություններին մոտ կանգնած մի քանի անհատների ձեռքում:

<u>Բռնություն և ոտնձգություններ</u>. Եղել են բռնության մի շարք միջադեպեր փետրվարի 18-ի նախագահական և մայիսի 5-ի տեղական ընտրությունները և տարվա ընթացքում տեղի ունեցող քաղաքացիական բողոքի ակցիաները լուսաբանող լրագրողների նկատմամբ:

Ապրիլի 23-ին Երևանի Նոր Նորք թաղամասի մի խումբ երիտասարդ տղաներ հարձակում գործեցին ընդդիմադիր ուղղվածություն ունեցող iLur.am կայքի լրագրող Հակոբ Կարապետյանի վրա, երբ նա փորձում էր նկարահանել իշխող Հանրապետական կուսակցության նախընտրական հանրահավաքը՝ ավագանու ընտրությունների նախաշեմին: Համաձայն մամուլի հաղորդումների՝ հարձակում

գործողները խլել են Կարապետյանի տեսախցիկն ու ջնջել ողջ պարունակությունը: Կարապետյանը ստացել էր մարմնական վնասվածք: Հարձակում գործողներին առաջնորդել էր ավագանու Հանրապետական անդամ Աշոտ Պապյանը: Մի քանի օր անց ոստիկանությունը, որը դեպքի փաստով գործ էր հարուցել,ինչպես նաև սկսել էր ներքին հետաքննություն ոստիկանության անգործության մասին հաղորդումների հիման վրա, գործից ազատեց Նոր Նորքի ոստիկանության բաժնի պետի տեղակալ Գագիկ Ամիրջանյանին և նկատողություն հայտնեց երկու ցածր կոչում ունեցող ոստիկանների: Հուլիսի 5-ին ոստիկանությունը հայտարարեց, որ կողմերի փոխադարձ համաձայնությամբ լրագրողի մասնագիտական գործունեության խոչընդոտելու համար ներկայացված քրեական մեղադրանքը հանվում է:

Մայիսի 20-ին առաջատար լրատվական կազմակերպությունները հանդես եկան հայտարարությամբ, որով քննադատում էին իրավապահ մարմիններին, որոնք ըստ հաղորդումների բռնության գործադրմամբ խոչընդոտել էին մի շարք ԶԼՄ-ների լրագրողների ու օպերատորների գործունեության իրականացմանը համազորայինի կողմից սպանված զինվորի ընտանիքի բողոքի ակցիայի լուսաբանման ժամանակ: Մայիս 21-ին Հանրային ռադիոյին տված հարցազրույցում նախագահի մամուլի խոսնակը քննադատեց լրագրողների նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքը՝ համոզմունք հայտնելով, որ համապատասխան կառույցները կձեռնարկեն բոլոր միջոցները «գործի հանգամանքները բացահայտելու» ուղղությամբ: Ըստ պաշտոնական տեղեկատվության իրավասու մարմինները քրեական գործ հարուցեցին լրագրողներից մեկի խցիկը խլելու համար, սակայն գործն հետագայում կարճվեց մեղավորի անձը հայտնի չլինելու պատճառով:

Հուլիսի 24-ին Ազգային անվտանգության ծառայությունը հանեց Սիվիլիթաս հիմնադրամի նախկին ղեկավար և նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանին ներկայացված փողերի լվացման և միջոցների յուրացման մեղադրանքները: Իրավասու մարմինները մեղադրանք էին ներկայացրել Վարդան Օսկանյանին 2012թ. մայիսին, անմիջապես այն բանից հետո, երբ նրա քաղաքական կուսակցությունը՝ Բարգավաճ Հայաստանը հայտարարեց իշխանական կոալիցիային չմիանալու իր որոշման մասին: Սիվիլիթաս հիմնադրամի կողմից գործարկվում էր ամենախոշոր առցանց լրատվամիջոցներից մեկը՝ ՍիվիլՆեթը: Բազմաթիվ դիտորդների գնահատմամբ հետաքննությունը և դրա իրականացման ժամանակը պայմանավորված էին քաղաքական շարժառիթներով:

<u>Գրաքննություն ու բովանդակային սահմանափակումներ</u>. Լրատվամիջոցները, մասնավորապես՝ հեռարձակող լրատվամիջոցներն իշխանություններին քննադատող նյութեր ներկայացնելու դեպքում վախենում էին հաշվեհարդարից: Հաշվեհարդարի դրսևորումներ կարող էին լինել դատական հայցերը, հեռարձակման լիցենզիան կորցնելու սպառնալիքը, կամայական հարկային ստուգումները կամ եկամուտների կորուստը, երբ գովազդատուներն իմանում էին, որ լրատվամիջոցը բարեհաճ չի տրամադրված իշխանություններին: Հաշվեհարդարի վախը հանգեցրել է լրատվամիջոցներում ինքնագրաքննության բարձր աստիճանի:

<u>Զրպարտության մասին դրույթներ/Ազգային անվտանգություն</u>. 2011թ. Սահմանադրական դատարանի ներկայացրած առաջարկն այն մասին, որ դատարանները խուսափեն զրպարտության ու վիրավորանքի համար անհամաչափորեն մեծ տույժեր նշանակելուց հանգեցրեց լրատվամիջոցների դեմ վնասի փոխհատուցման պահանջներ ներկայացնողներին վճարվող գումարների նվազեցմանը:

Համացանցի ազատություն

Տարվա ընթացքում չեն եղել կառավարության կողմից համացանցի/ինտերնետի հասանելիության սահմանափակումներ կամ վստահարժան հաղորդումներ կառավարության կողմից առանց համապատասխան իրավական թույլտվության էլեկտրոնային փոստի կամ համացանցային ճեպազրույցների վերահսկման մասին: Անհատները և խմբերն ընդհանուր առմամբ կարողացել են տեսակետներ արտահայտել համացանցի միջոցով, ինչպես նաև էլեկտրոնային փոստով: Տարվա

ընթացքում որոշ վեբ կայքեր, այդ թվում անկախ Հետք-ի, ԳԱԼԱ հեռուստաընկերության և քաղաքացիական ընտրական մոնիտորինգի iDitord-ի կայքերը, ինչպես նաև այլ ՀԿ-ների կայքեր հաղորդել են կիբերհարձակումների թիրախ դառնալու մասին:

Ըստ Միջազգային հեռահաղորդակցության միության տվյալների 2012թ. Հայաստանում համացանցից օգտվում էր ազգաբնակչության 39 տոկոսը:

Ուսումնակրթական ազատություն ու մշակութային միջոցառումներ

Եղել են իշխանությունների կողմից ուսումնակրթական ազատության ու մշակութային միջոցառումների սահմանափակումների մասին որոշ հաղորդումներ:

Լրատվամիջոցներում փետրվարի 25-ին հաղորդում եղավ, որ դասադուլներին մասնակցելու համար Ինֆորմատիկայի պետական քոլեջից հեռացվել է ուսանող Հովհաննես Ղազարյանը: Մարտի 15-ին հաղորդում եղավ, որ Երևանի պետական համալսարանը չի երկարաձգել պրոֆեսոր Արարատ Միրզոյանի հետ պայմանագիրը՝ ըստ պնդումների փետրվարի 27-ին դասադուլի ժամանակ ռեկտորի օգնական Գևորգ Մելքոնյանի վարքագծի վերաբերյալ բացասաբար արտահայտվելու համար:

Հասարակությունն ընդհանուր առմամբ առաջատար պետական բուհերը դիտարկում է որպես խիստ քաղաքականացված ու իշխող Հանրապետական կուսակցության հետ փոխկապակցված կառույցներ: Օրինակ՝ Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահն էր նախագահ Սերժ Սարգսյանը, իսկ բուհի ռեկտոր Արամ Սիմոնյանը Հանրապետական կուսակցության խորհրդի անդամ էր:

բ) Խաղաղ հավաքներ կազմակերպելու ու միավորումներ կազմելու ազատություն

Հավաքների ազատություն

Սահմանադրությամբ ու օրենքներով ամրագրված է հավաքների ազատության իրավունքը, և թեպետ իշխանությունները հաճախ հարգել են այս իրավունքը, ըստ հաղորդումների իրավասու մարմինների կողմից ձեռնարկվել են միջոցներ խոչընդոտելու մասնակցությունը որոշ հանրահավաքների, և եղել են հաղորդումներ ցուցարարների դեմ անհամաչափ խիստ ուժ գործադրելու միջադեպերի վերաբերյալ:

Եղել են առանձին հաղորդումներ տեղական իշխանությունների կողմից փետրվարի 18-ի ընտրությունների քարոզարշավի ընթացքում քաղաքական հանրահավաքներին խոչընդոտելու կամ նախապատվությունն իշխանամետ միջոցառումներին տալու մասին: Եղել են հաղորդումներ, որ տեղական իշխանությունները խոչընդոտել են քաղաքացիական ծառայողների մասնակցությանն ընդդիմադիր ուժերի հանրահավաքներին, և եղել են բազմաթիվ հաղորդումներ այն մասին, որ պետական պաշտոնյաները պարտադրել են պետական ծառայողներին ու ուսանողներին մասնակցել իշխանամետ ուժերի հանրահավաքներին: Եղել են նաև պնդումներ, որ իրավասու մարմինները սահմանափակել են երթևեկությունն այն ճանապարհներով, որոնք տարել են դեպի ընդդիմության հանրահավաքների վայրեր:

Ոստիկանությունն ու տեղական ինքնակառավարման մարմիններն ընդհանուր առմամբ հարգել են անհատների հանրահավաքներ կազմակերպելու իրավունքները, այդ թվում նաև ընտրություններից հետո, երբ ընդդիմադիր կուսակցությունները կազմակերպեցին չարտոնված հանրահավաքներ Երևանում և երկրի այլ վայրերում: Տարվա ընթացքում ոստիկանությունը տեսանկարահանել է քաղաքական հանրահավաքների մասնակիցներին՝ թե մարզերում, թե Երևանում: Ըստ տեղական դիտորդների, այս միտումնավոր տեսանելի հետախուզումը սթափեցնող ազդեցություն է ունեցել քաղաքացիների հանրահավաքների մասնակցելու ցանկության և ազատ խոսքի իրենց իրավունքի իրացման վրա: Եղել են նաև հաղորդումներ, որ պետական բուհերի վարչական կազմն ուսանողներին

կողպել է բուհի շենքում՝ կանխելու նրանց մասնակցությունը նախագահական ընտրությունների անցկացումը բողոքարկող հանրահավաքին:

Եղել են որոշ բողոքներ առ այն, որ ոստիկանությունն առանձին միջադեպերում անհամաչափ խիստ ուժ է գործադրել բողոքի ակցիաների մասնակիցների նկատմամբ: Որոշ դիտորդներ բողոքել են, որ ապրիլի 9-ին ոստիկանությունն անհամաչափ խիստ ուժ կիրառեց՝ կանխելու ցուցարարների տեղաշարժը Նախագահական նստավայրի ուղղությամբ, ուր պաշտոնակալության միջոցառում էր ընթանում՝ օտարերկրյա բարձրաստիճան հյուրերի մասնակցությամբ: Տեսանյութերում երևում էր, թե ոստիկաններն ինչպես էին ծնկով հարվածում ընդդիմադիր «Ժառանգություն» կուսակցության խորհրդի անդամ Արմեն Մարտիրոսյանի դեմքին: Ըստ ոչ պաշտոնական հաղորդումների միջադեպի հետ առնչություն ունեցող երկու ոստիկաններ ազատվել են պարտականությունների կատարումից: Անհամաչափ խիստ ուժի կիրառման նմանատիպ բողոքներ եղել են նաև օգոստոսին ու աշնանը՝ քաղաքացիական բողոքի ակցիայի մասնակիցների նկատմամբ:

Դեկտեմբերի 2-ին Ռուսաստանյան Դաշնության նախագահի Հայաստան այցելելու օրն իրավապահները ցրեցին 500-1000 հոգանոց խումբը, որը ցանկանում էր Ռուսաստանի առաջնորդության ներքո գտնվող Եվրասիական մաքսային միությանն անդամակցելու մասին իշխանությունների որոշման դեմ բողոքի երթ անցկացնել: Օրվա ընթացքում ոստիկանությունը բերման ենթարկեց 110 հոգու, այդ թվում՝ ցուցարարների, երթը լուսաբանող լրագրողների, քաղաքում ցուցապաստառներ տեղադրող ակտիվիստների և որոշ անցորդների, ովքեր պատահաբար գտնվել էին ցուցարարների կամ նախագահականի մոտակայքում: Ոստիկանությունը բերման ենթարկված բոլոր անձանց, մի քանի ժամ պահելուց և վարչական իրավախախտում թույլ տալու մասին որոշումներ ընդունելուց հետո, ազատ արձակեց: Օմբուդսմենը դեկտեմբերի 3-ին հանդես եկավ հայտարարությամբ՝ դատապարտելով ոստիկանության գործողությունները:

Հուլիսի 15-ին վարչական դատարանի դատավոր Ռուզաննա Հակոբյանը վճիռ կայացրեց, որ ոստիկանության կողմից խախտվել են «Ասպարեզ» ակումբի նախագահ Լևոն Բարսեղյանի իրավունքները, երբ վերջինիս բերման են ենթարկել 2011թ. անկախության 20-ամյա հոբելյանին նվիրված շքերթում օտարերկրյա մասնակցության դեմ բողոքի փոքր երթի մասնակցելիս: Դատավոր Հակոբյանն աննախադեպ վճիռ կայացրեց, որ ոստիկանության գործողություններով խախտվել են Լևոն Բարսեղյանի խոսքի և արտահայտվելու, միավորումներ կազմելու, հավաքների ազատության, ազատ տեղաշարժի և անձնական ազատության ու անվտանգության իրավունքները: Ոստիկանության կողմից վճիռը չբողոքարկվեց:

գ) Կրոնի ազատություն

Տես՝ Պետքարտուղարության Կրոնական ազատությունների մասին միջազգային զեկույցը www.state.gov/j/drl/irf/rpt էջում:

դ) Տեղաշարժվելու ազատություն, ներքին տեղահանված անձինք, փախստականների պաշտպանություն և քաղաքացիություն չունեցող անձինք

Օրենքով ապահովվում է երկրի ներսում տեղաշարժվելու, արտասահմանյան ուղևորությունների, արտագաղթի և հայրենադարձության ազատությունը: Եղել են որոշ հաղորդումներ քաղաքական հանրահավաքների մասնակցության հետ կապված տեղաշարժի որոշ սահմանափակումների վերաբերյալ: Ներքին տեղահանված անձանց, փախստականներին, վերադարձող փախստականներին ու ապաստան հայցողներին, քաղաքացիություն չունեցող անձանց ու այլոց պաշտպանելու ու աջակցելու նպատակով իրավասու մարմինները համագործակցել են ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի (UNHCR) և մարդասիրական այլ կազմակերպությունների հետ:

ՀԱՅԱՍՏԱՆ

Տեղաշարժը երկրի ներսում. Տարվա ընթացքում հաղորդումներ են եղել, որ իրավասու մարմինները սահմանափակել են տեղաշարժվելու ազատությունը՝ խոչընդոտելով Երևանից դուրս բնակվող քաղաքացիների մուտքը մայրաքաղաք ընդդիմության հանրահավաքներին մասնակցելու նպատակով: Եղել են նաև առանձին հաղորդումներ, որ տեղական իշխանությունները քաղաքական հանրահավաքներին մասնակցությունը կանխելու համար սահմանափակել են տեղաշարժը շրջանների միջև:

Արտասահմանյան ուղևորություններ. Ժամանակավոր կամ մշտապես երկրից հեռանալու համար քաղաքացիները պետք է ելքի վիզա ձեռք բերեն: Ժամանակավոր երկրից բացակայելու համար անհրաժեշտ ելքի վիզա կարելի է մեկ օրվա ընթացքում հեշտությամբ ձեռք բերել՝ վճարելով 1000 դրամ (2.44 ԱՄՆ դոլար) յուրաքանչյուր տարվա համար:

Ներքին տեղահանված անձինք (ՆՏԱ)

Ադրբեջանի հետ Լեռնային Ղարաբաղի հետ կապված պատերազմի ընթացքում իշխանությունները սահմանային գոտիներից տարհանել են մոտավորապես 65000 տնային տնտեսություն, բայց մեծամասնությունը հետո վերադարձել են իրենց բնակավայրերը կամ բնակություն են հաստատել այլ վայրերում: 2010թ. երկիր կատարած այցի ընթացքում Ներքին տեղահանվածների մարդու իրավունքների հարցերում մասնագիտացած ՄԱԿ-ի մի ներկայացուցիչ երկրում գտնվող որոշ ՆՏԱ-ների ու նախկին փախստականների համար որպես դեռևս պահպանված խոչընդոտներ առանձնացրեց համարժեք բնակարանային պայմանների բացակայությունն ու սահմանափակ տնտեսական հնարավորությունները:

Փախստականների պաշտպանություն

Ապաստանի հասանելիություն. Օրենքի համաձայն նախատեսվում է անձանց փախստականի կամ ապաստան հայցողի կարգավիճակի տրամադրում, և կառավարությունը ստեղծել է փախստականներին պաշտպանություն տրամադրելու համակարգ: Օրենքն ունի մի շարք թերություններ, և մարդու իրավունքների հարցերով դիտորդները համամիտ են, որ միջազգային ստանդարտներին համապատասխանելու համար ապաստան հայցելու ընթացակարգերը կատարելագործման կարիք ունեն: Ոչ հայկական ծագում ունեցող հնարավոր ապաստան հայցողների համար տարածք մուտք գործելու վերաբերյալ առկա տեղեկատվությունը շատ սահմանափակ էր:

Միգրացիայի պետական ծառայությունը գործարկում է ընդունարան ապաստան հայցողների համար և պատասխանատու է նրանց գրանցման ու ապաստան տրամադրելու հայցերով որոշումների կայացման համար: Ծառայությունն ընդունարանը նախատեսել է առավելագույնը 45 հոգու համար, սակայն տարվա ընթացքում ավելի շատ մարդ է պահվել այնտեղ: Նրանց, ում հնարավոր չի եղել տեղավորել ընդունարանում, չեն տրամադրվել նաև սննդի փաթեթներ իրավասու մարմինների կողմից:

Տարվա առաջին կեսի տվյալներով նշվում էր, որ Սիրիայում քաղաքացիական պատերազմ սկսվելուց ի վեր մոտ 10000 հոգի Սիրիայից ժամանել են Հայաստան, ընդ որում գրեթե բոլորն ազգությամբ հայեր են: Տարվա առաջին կեսի տվյալներով Սիրիայից ժամանած ազգությամբ հայ 718 հոգի դիմել են Միգրացիայի պետական ծառայությանն ապաստան ստանալու համար, ընդ որում 471-ը ստացել էին փախստականի կարգավիճակ, իսկ 103-ը դեռ սպասում էին որոշման ընդունմանը: Իրավասու մարմինների կողմից 144 անձանց գործերը փակվել են տարբեր պատճառներով, այդ թվում դիմումը ետ վերցնելու, կամ հայրենի երկիր վերադառնալու պատճառներով: Սիրիայից ժամանած մնացած էթնիկ հայերի գերակշիռ մասը ձեռք է բերել ՀՀ քաղաքացիություն ու երկարաժամկետ կացության թույլտվություն, չնայած պարզ չէր, թե ի վերջո քանի սիրիահայ է մնացել երկրում:

ՀԱՅԱՍՏԱՆ

Չարաշահումներ փախստականների նկատմամբ. 2012թ. հուլիսին ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեն մտահոգություն հայտնեց այն մասին, որ որոշ ապաստան հայցողների նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվել անօրինական մուտք գործելու համար, թեպետ նրանք մատնանշել են, որ ապաստան են հայցում: Իրավասու մարմիններն ապաստան հայցելու մասին հայտը գրանցելուց հետո ընդհանուր առմամբ ազատ չեն արձակել այն ապաստան հայցողներին, ովքեր պատիժ էին կրում երկիր անօրինական մուտք գործելու համար, այլ նրանցից պահանջվել է կրել պատժի մնացած մասը:

Ազգությամբ ոչ հայ ապաստան հայցողների դիմումների կանոնավոր մերժումը, որը հաճախ արվում է ազգային անվտանգության նկատառումներով, շարունակել է մնալ որպես նորմ:

Հիմնական ծառայությունների հասանելիությունը. Իրավասու մարմինները սովորաբար փախստականներին մշտական կացության կարգավիճակ շնորհելուց հետո դժվարություն են ունենում նրանց հասարակությանն ինտեգրելու հարցում: Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված 1991-94թթ. փախստականներին տրամադրվող կացարանները սովորաբար եղել են ոչ բավարար քանակության և ունեցել են վատ պայմաններ: Փախստականների սոցիալ-տնտեսական խնդիրների մեծ մասը, որոնք նույնն են, ինչ ընդհանուր ազգաբնակչությանը, առավել սրվում էին լեզվական խոչընդոտների պատճառով: Սիրիահայերը խոսում են հայերենի այլ բարբառով, և որպես երկրորդ լեզու խոսում են արաբերեն, և ոչ ռուսերեն: Հայաստանի քաղաքացիության համեմատաբար դյուրին ձեռք բերումը չի լուծում ինտեգրման հետ կապված բոլոր խնդիրները, այդ թվում փախստական ազգաբնակչության տեղահանությունից բխող սոցիալական և տնտեսական ազդեցությունները: Փախստականների համեմատաբար փոքր թվաքանակը, ովքեր հայկական ծագում չունեին, ինտեգրման հետ կապված ավելի սուղ հնարավորություններ ունեին:

Քաղաքացիություն չունեցող անձինք

Ըստ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի 2012թ. տարեվերջի դրությամբ երկրում կացության իրավունք ունեցող 35 քաղաքացիություն չունեցող անձ կար: Բացի այդ, քաղաքացիություն չունեին նաև Ադրբեջանից եկած 1716 փախստականներ: Շարունակում էին տեղ գտնել քաղաքացիություն չունենալու առանձին դեպքեր, երբ անձը հրաժարվում էր հայկական քաղաքացիությունից՝ չունենալով որևէ այլ երկրի քաղաքացիություն: Հպատակեցման/քաղաքացիության դիմում ներկայացրած անձինք մերժման դեպքում իրավունք չունեին բողոքարկել: Քաղաքացիություն չունենալու հանգամանքը որոշելու հստակ ընթացակարգ չկար, և չկար ազգային օրենսդրություն քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների մասին:

ՄԱՍ 3. ՀԱՐԳԱՆՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Չնայած սահմանադրությամբ և օրենքով քաղաքացիներին տրված է խաղաղ եղանակով իշխանությունը փոխելու իրավունք, սակայն իշխանությունները շարունակել են միջամտել այդ իրավունքի իրացմանը ընտրությունների ընթացքում:

Ընտրություններ և քաղաքական մասնակցություն

Կայացած վերջին ընտրությունները. Փետրվարի 18-ին կայացան նախագահական ընտրություններ: Ընտրակաշառքի, գործող պաշտոնյաների օգտին վարչական ռեսուրսի մեծամասշտաբ չարաշահման, բացակա ընտրողների փոխարեն ինքնակոչ անձանց քվեարկության և բազմաթիվ տեղամասերում չարտոնված կազմակերպված խմբերի առկայության մասին հաղորդումները հասարակության աչքերում խարխլեցին ընտրական գործընթացի անաչառությունը և վարկաբեկեցին ընտրական ինստիտուտը:

ՀԱՅԱՍՏԱՆ

Նախագահական ընտրությունները դիտարկվեցին ԵԱՀԿ Մարդու իրավունքների ու ժողովրդավարական հաստատությունների գրասենյակի (ԺՀՄԻԳ) կողմից: Դիտորդների վերջնական զեկույցում, որը հրապարակվեց մայիսի 8-ին, ԺՀՄԻԳ-ը նշում էր, որ ընտրություններն «ընդհանուր առմամբ լավ էին կազմակերպված և առանձնանում էին հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքով», սակայն տեղ գտան թերություններ, այդ թվում՝ հանրային վարչարարման անկողմնակալության բացակայություն, վարչական ռեսուրսի չարաշահում և ընտրողների նկատմամբ ճնշումների դեպքեր: Քվեարկության օրն առանձնացավ գործընթացին անհարկի միջամտություններով, հիմնականում գործող նախագահի վստահված անձանց կողմից, և դիտարկվեցին մի շարք լուրջ խախտումներ: ԺՀՄԻԳ-ը նաև առանձնացրեց, որ ընտրությունների վերջնական արդյունքների համաձայն գործող նախագահը մինչև 50 տոկոս ընտրողների մասնակցություն արձանագրած 249 տեղամասերից միայն 40-ում էր ստացել ձայների 50 տոկոսից ավելին, մինչդեռ Ռաֆֆի Հովհաննիսյանն այս 249 տեղամասերից 155-ում ստացել էր ձայների 50 տոկոսից ավելին: 70 տոկոս և ավել մասնակցություն արձանագրած տեղամասերում գործող նախագահի կողմին քվեարկողների տոկոսն էլ էր 70 և բարձր: Բարձր մասնակցության ու գործող նախագահի բարձր արդյունքների միջև սերտ հարաբերակցությունը մատնանշում էր «քվեարկության և ձայների հաշվարկման հետ կապված լուրջ խախտումների հնարավորությունը», որը «մտահոգություններ է առաջացնում ընտրական գործընթացների արդարության վերաբերյալ»: Տարեվերջի դրությամբ երկրի իշխանությունների կողմից ԺՀՄԻԳ-ի առաջարկներից որևէ մեկը չէր իրագործվել:

Դիտորդները նաև քննադատում էին բողոքների ներկայացման ու բողոքարկման գործընթացը: Վերջնական զեկույցում ԺՀՄԻԳ-ը եզրակացրեց. «Ընտրություններին առնչվող բողոքներ ներկայացնելու իրավունքն անհիմն սահմանափակված է… բողոքների լուծման ընթացքում ԿԸՀ-ն շարունակաբար կիրառել է չափազանց ձևական մոտեցում, որի արդյունքում բողոքները կամ համարվել են անընդունելի, կամ մերժվել: Ընտրական վեճերի քննությունը չի տրամադրել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ և չի երաշխավորել իրավական ամբողջականությունը»: Ընտրական հանձնաժողովներն ու Սահմանադրական դատարանն ընտրություններից հետո ներկայացված բողոքների մեծ մասը մերժել են վարույթ ընդունել՝ հիմնավորված չլինելու կամ ընտրությունների արդյունքների վրա ազդելու համար բավարար ձայներ չներառելու հիմքով:

Բացի ընթացակարգային խնդիրներից ԺՀՄԻԳ-ը նաև նշեց ընտրական գործընթացի նկատմամբ հասարակության վստահության ցածր մակարդակը: Մարտի 14-ին Սահմանադրական դատարանը, որը չբավարարեց նախագահի թեկնածուներ Ռաֆֆի Հովհաննիսյանի և Անդրիաս Ղուկասյանի բողոքները, նույնպես առանձնացրեց ընտրական գործընթացների նկատմամբ հասարակության վստահության ցածր մակարդակը:

ԺՀՄԻԳ-ի զեկույցում թեկնածուներին առաջադրվող 10 տարվա քաղաքացիության և մշտապես բնակության պահանջները համարվում էին չափից ավելի խիստ: Կային նաև մտահոգություններ, որ իշխանություններն օգտագործել են վարչական ռեսուրսը, ընտրովի քրեական հետապնդումներն ու դրանց սպառնալիքը հավանական թեկնածուներին գործող նախագահի հետ մրցակցելուց հետ պահելու համար:

Դիտորդները նշեցին, որ նախընտրական քարոզչությունն ընդհանուր առմամբ արդարացի էր, սակայն շեշտեցին, որ բանավեճի բացակայության պատճառով «ընտրողները զրկվել են բովանդակալից երկխոսություն տեսնելու հնարավորությունից, ինչ կարող էր ներկայացնել մրցակից թեկնածուների նախընտրական ծրագրերը կամ գործող նախագահի գործունեությունն իր պաշտոնավարման ընթացքում»: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկույցում նշվում էր, որ պաշտոնական քարոզարշավի ընթացքում կուսակցությունների համար ապահովվել էր լրատվամիջոցների հավասար հասանելիություն, սակայն հետընտրական զարգացումների վերաբերյալ հիմնական հեռարձակող լրատվամիջոցների

լուսաբանումներում կար ընտրությունների անցկացումը քննադատող դիրքորոշումները սահմանափակելու միտում:

Քաղաքական կուսակցություններ. Քաղաքական կուսակցությունների գրանցման կամ գործունեության հետ կապված անհարկի իրավական սահմանափակումների մասին հաղորդումներ չեն եղել: Այնուհանդերձ, շարունակաբար եղել են դժգոհություններ, որ իշխանություններն օգտագործել են վարչական և իրավական ռեսուրսները, որպեսզի ապախրախուսեն ընդդիմադիր կուսակցություններին ուղղվող ֆինանսական հատկացումները՝ այդպիսով սահմանափակելով այդ կուսակցությունների գործունեությունը: Կառավարության ճնշումների հետևանքով պետական ֆինանսավորման կամ մասնավոր նվիրատվությունների միջոցով միջոցներ հայթայթելու ընդդիմադիր կուսակցությունների անկարողության պատճառով շարունակվել է ընդդիմադիր կուսակցությունների մեկուսացման խորացումը:

Եղել են դժգոհություններ, որ կապեր ունեցող գործարարներն իրենց շահույթից որոշակի մաս ուղղել են իշխանական կոալիցիայի կուսակցություններին՝ անարդարացիորեն հարկեր չվճարելու կամ հարկման մեղմ դաշտում հայտնվելու դիմաց: Բացի այդ, եղել են պնդումներ, որ աշխատանքի ընդունման որոշումներում իշխանությունները խտրական վերաբերմունք են հանդես բերել ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների անդամների հանդեպ:

Կանանց և փոքրամասնությունների մասնակցությունը. 2012թ. հուլիսին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն նշեց, որ շարունակում է մտահոգված լինել երկրի քաղաքական կյանքում, ինչպես նաև հանրային հատվածի որոշումներ կայացնող պաշտոններում կանանց ներկայացվածության ցածր մակարդակով: Տարեվերջի դրությամբ 131 պատգամավոր ունեցող Ազգային ժողովում կար 14 կին պատգամավոր, կառավարությունում՝ երկու կին նախարար, իսկ կին մարզպետներ չկային: Երևանի ավագանու 65 ընտրված անդամներից միայն տասն էին կանայք, իսկ Երևանի 12 վարչական համայնքներից որևէ մեկի ղեկավարը կին չէր:

ՄԱՍ 4. ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Օրենքով պաշտոնեական կոռուպցիայի համար սահմանված են քրեական պատժամիջոցներ. Սակայն կառավարությունն օրենքն արդյունավետորեն չի կիրառել, և շատ պաշտոնյաներ անպատժելիորեն ներգրավված են եղել կոռուպցիոն գործողությունների մեջ: Քաղաքացիական խմբերը, որ աշխատում էին կոռուպցիայի դեմ նշում էին, որ իշխանությունները շարունակում էին անտեսել լրատվամիջոցների և այլ հաղորդումները, որոնք ակնարկում էին պետական պաշտոնյաների կոռուպցիոն գործելաոճի մասին, ինչը ծառայել է հասարակության վստահության խարխլմանը:

2012թ. հուլիսին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն մտահոգություն հայտնեց իշխանության բոլոր ճյուղերում մշտական կոռուպցիայի մասին հնչող մեղադրանքների վերաբերյալ: Կոմիտեն նշեց, որ վերին օղակներում կոռուպցիայի դեմ պայքարի մասին համոզիչ արդյունքների բացակայությունը խարխլում է հասարակության վստահությունն արդարադատության իրականացման նկատմամբ: Կոռուպցիան զգալի ազդեցություն է ունեցել տնտեսական աճի վրա: Ուորլդ Էքոնոմիք Ֆորումի *2013-2014թթ. համաշխարհային մրցունակության զեկույցում* որպես Հայաստանում տնտեսավարելու ամենամեծ խնդրահարույց գործոն նշվում էր կոռուպցիան:

Կոռուպցիա. Տարեվերջի դրությամբ դեռ քննություն չէր սկսվել Ազգային ժողովի պատգամավոր և Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վարդան Այվազյանին առնչվող կոռուպցիոն գործով, թեպետ օտարերկրյա դատարանի վճռով 2012թ. նրա նկատմամբ սահմանվել էր տուգանք 37.5 միլիոն ԱՄՆ դոլարի չափով՝ բնապահպանության նախարարի պաշտոնը զբաղեցրած ժամանակ Գլոբալ Գոլդ Մայնինգ ընկերությունից կաշառք պահանջելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆ

Մայիսին «Հետքը» հրապարակեց հոդվածների մի շարք, որտեղ նկարագրվում էր յուրացման ու խարդախության հնչեցված մեղադրանքներով մի գործ, որի շրջանակներում տեղական առևտրային բանկերի կողմից վարկային միջոցների փոխանցումներ էին կատարվել օֆշորային ընկերություններին: Հոդվածները լայն մեկնաբանությունների տեղիք տվեցին: Մի դրվագում վարկը ստացել էր Կիպրոսում գրանցված ընկերություն, որը «Հետքի» հրապարակման համաձայն պատկանում էր վարչապետ Տիգրան Սարգսյանին, Հայաստանյայց առաքելական եկեղեցու արքեպիսկոպոս Նավասարդ Կճոյանին ու գործարար Աշոտ Սուքիասյանին: Սարգսյանը և Կճոյանը հերքեցին իրենց մասնակցությունը: Հուլիսին գլխավոր դատախազը դիմեց իր կիպրոսյան գործընկերոջն այդ փաստով հարուցված քրեական գործի քննության հարցում աջակցելու խնդրանքով:

Ապրիլին Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ը տեղեկատվություն հրապարակեց 2010-12թթ. նախագահականի կողմից ՀԿ-ներին տրամադրված դրամաշնորհների մասին: Նախագահականը 500 միլիոն ՀՀ դրամ (1.2 մլն ԱՄՆ դոլար) ընդհանուր գումարով դրամաշնորհներ է տրամադրել 31 ՀԿ-ների: Լրատվամիջոցների հաղորդմամբ շահառու ՀԿ-ները գոյություն են ունեցել միայն թղթի վրա, գրանցվել են դրամաշնորհի ստացումից ոչ շատ առաջ և մեծապես հիմնվել են մարդկանց մի փոքր խմբի կողմից: Արդարադատության նախարարությունը որպես ՀԿ-ներից մեկի հիմնադիր գրանցել էր Ազգային ժողովի Հանրապետական պատգամավոր Լևոն Մարտիրոսյանին: Նախքան Ազգային ժողով անցնելը 2008-12թթ. Լևոն Մարտիրոսյանը զբաղեցնում էր նախագահի օգնականի պաշտոնը և հիմնադրել է Միացյալ ազատական ազգային կուսակցությունը: Այդ հարցով տարվա ընթացքում իշխանությունների կողմից գործ չի հարուցվել: Մնացած 30 ՀԿ-ների հիմնադիրների մեծ մասը կապեր ունեին կամ Լևոն Մարտիրոսյանի, կամ Միացյալ ազատական ազգային կուսակցության հետ:

Տարվա ընթացքում շարունակվում էին հաղորդումները Նաիրիտ կաուչուկի գործարանի հետ կապված խարդախության ու յուրացումների մասին: Խոսք էր գնում 180 միլիոն դոլար վարկային միջոցների մասին, որոնք փոշիացվել էին օֆշորային ընկերություններին փոխանցվելու միջոցով: Լրատվամիջոցները պնդում էին, որ Էներգետիկայի ու բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանն ի պաշտոնե պարտավոր էր վերահսկել վարկի կատարման ընթացքը և յուրացման վերաբերյալ մեղադրանքներ էին հնչում մի շարք այլ բարձրաստիճան պաշտոնյաների վերաբերյալ: Գլխավոր դատախազությունը նախաքննություն սկսեց և գործը փոխանցեց ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ բաժնին, որն էլ հաջորդիվ փակեց գործը հանցակազմի բացակայության հիմքով: Իշխանությունները միջոցների փոշիացման մասին որևէ պարզաբանում չեն տվել:

Թեև սահմանադրությամբ և օրենքներով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց արգելվում է պետական պաշտոն զբաղեցնել, սակայն գործարարները շարունակել են տեղեր զբաղեցնել Ազգային ժողովում, իսկ պետական տարբեր պաշտոնյաներ, ըստ հաղորդումների, շարունակել են օգտագործել իրենց պաշտոններն ի նպաստ իրենց սեփական գործարար շահերի:

Օգոստոսին «Հետքը» մի հոդված հրապարակեց, որտեղ մեղադրանք էր հնչում, որ քաղաքացիական ավիացիայի կարգավորման համար պատասխանատու պաշտոնյաներն ու նրանց հետ կապեր ունեցող անձինք, հանդիսանալով տարբեր ավիաընկերությունների սեփականատերեր, քաղաքացիական ավիացիայի ոլորտում գործարար շահեր ունեն: Օրինակ՝ Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (ՔԱԳՎ) պետի տեղակալ Արամ Մարությանը Ատլանտիս Յուրոփիեն Էյրվեյզ ընկերության համասեփականատերերից էր: ՔԱԳՎ իրավասու էր հաստատել նոր ավիափոխադրողների մուտքը շուկա և ծանրակշիռ ներգրավվածություն ուներ քաղաքացիական ավիացիայի ոլորտի քաղաքականության վերաբերյալ կառավարության որոշումներում: Հաղորդումները մատնանշում էին, որ Ատլանտիս Յուրոփիեն Էյրվեյզն անվճար ձեռք է բերել Երևանից Վիեննա և Պրահա թռչող Ավստրիական և Չեխական ավիաուղիների օդանավերում «ազատորեն տեղաբաշխվող» մի շարք տեղերի վաճառքի իրավունքը: Կառավարությունը ՔԱԳՎ-ում շահերի

բախման ակնհայտ դեպքերով քննություն կամ քրեական հետապնդում սկսելու ուղղությամբ քայլեր չձեռնարկեց:

Կոռուպցիայի գործերի քննության համար պատասխանատու է ոստիկանությունը, իսկ դրանցով դատական կարգով հետապնդում իրականացնելու համար գլխավոր դատախազությունը: Ըստ լայն տարածում ստացած հաղորդումների՝ այս կառույցներից ոչ մեկն արդյունավետ կամ անկախ չի գործել, և ոչ մեկը չի ունեցել բավարար ռեսուրսներ:

Հաղորդում տվողների պաշտպանությունը. Չկա հատուկ օրենք, որով կպաշտպանվեն հանրային ու մասնավոր հատվածի այն աշխատակիցները, ովքեր ներքին կամ օրինական հրապարակային հաղորդում կտան անօրինականության ապացույցների մասին, ինչպիսիք են օրինակ՝ կաշառք պահանջելը կամ այլ կոռուպցիոն դրսևորումները, խոշոր վատնումները կամ խարդախությունը, անարդյունավետ կառավարման խոշոր դեպքերը, լիազորությունների չարաշահումը կամ հանրության առողջության ու անվտանգության համար վտանգավոր գործողությունները:

Եկամուտների ու գույքի հայտարարագրում. Օրենքով պահանջվում է, որ բոլոր բարձրաստիճան պետական պաշտոնյաները և նրանց ընտանիքի անդամները տարեկան կտրվածքով ներկայացնեն գույքի և եկամուտների հայտարարագրեր: Օրենքի համաձայն Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը հավաքում և դիտարկում է հայտարարագրերը, սակայն չունի դրանց արժանահավատությունը ստուգելու կամ կեղծ տվյալներ ներկայացնելու համար պաշտոնյաների նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու իրավասություն: Քրեական պատիժ հայտարարագրեր չներկայացնելու կամ դրանցում կեղծ տեղեկություններ ներկայացնելու համար չի եղել:

Տեղեկատվության հասանելիությունը հանրության համար. Թեև օրենքը սահմանում է պաշտոնական տեղեկատվության հանրային հասանելիություն, սակայն որոշ պետական կառույցներ և պաշտոնյաներ չեն կամեցել ապահովել այն: Տարեվերջի դրությամբ կառավարությունը դեռ չէր ընդունել տեղեկատվության հավաքումն ու տրամադրումը կարգավորող իրավական ակտերը, որոնք պահանջվում են օրենքով և լրացնում են այն: Պաշտոնյաները տեղեկատվության տրամադրումը մերժելիս հողում են կատարել այս ակտերի բացակայությանը:

ՄԱՍ 5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՎՈՂ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարդու իրավունքների ոլորտի մի շարք տեղական և միջազգային խմբեր ընդհանուր առմամբ գործել են առանց կառավարության սահմանափակումների՝ ազատորեն հետաքննելով և հրապարակելով մարդու իրավունքների դեպքերի վերաբերյալ իրենց եզրակացությունները: Չնայած պետական պաշտոնյաները երբեմն արձագանքել են նրանց կարծիքներին և համագործակցել, ժամանակ առ ժամանակ եղել են նաև ակտիվիստների հետապնդումներ:

Իշխանության իրավասու մարմինները հիմնականում համաձայնել են հանդիպել տեղական հասարակական կազմակերպությունների դիտորդների հետ և հետևել են որոշ հասարակական կազմակերպությունների առաջարկներին, մասնավորապես՝ սոցիալական, կրթական ու տեղական խնդիրներին առնչվող հարցերում: Միաժամանակ, նրանք չեն արձագանքել ՀԿ-ների հնչեցրած մեղադրանքներին՝ կապված իրավապահ մարմինների կողմից վատ վերաբերմունքի ու չարաշահումների դրսևորումների հետ: Իրավասու մարմինների սովորական արձագանքը նմանատիպ դեպքերում եղել է այն, որ քննություն է իրականացվել ու մեղադրանքները չեն հիմնավորվել:

Իրավասու մարմինների կողմից երբեմն եղել են հետապնդումներ մարդու իրավունքների խմբերի և քաղաքացիական ակտիվիստների նկատմամբ, ովքեր տարվա ընթացքում մասնակցել են բողոքի խաղաղ ակցիաների տարբեր հասարակական հնչեղություն ունեցող հարցերի դեմ, ինչպիսիք են

օրինակ՝ հանրային տրանսպորտի վարձավճարների ու ուսման վարձի ավելացումը, բնակելի թաղամասերում անօրինական շինարարությունը, Ռուսաստանի հետ միասին մաքսային միությանը միանալու նախագահական որոշումը և այլն: Օգոստոսի 22-ից մինչև սեպտեմբերի սկիզբը տղամարդկանց 6-12 հոգանոց կազմակերպված մի խումբ, երբեմն մահակներով ու այլ բութ գործիքներով զինված, Երևանի կենտրոնի տարբեր հատվածներում հարձակումներ է գործել ակտիվիստների վրա, երբեմն հետևելով նրանց բողոքի ակցիայի անցկացման վայրից սկսած:

Սեպտեմբերի 5-ին նման մի հարձակման ժամանակ 6-7 տղամարդուց կազմված խումբը ծեծի ենթարկեց ԶԼՄ-ների դիտորդ հանդիսացող Երևանի մամուլի ակումբի ծրագրերի համակարգող Հայկակ Արշամյանին և «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի խորհրդի անդամ Սուրեն Սաղաթելյանին: Երկու տուժողներին էլ, ովքեր ստացել էին բազմակի կապտուկներ ու կտրվածքներ մարմնի ու դեմքի վրա, անհրաժեշտ եղավ տեղափոխել հիվանդանոց, և Սաղաթելյանը քթի վիրահատության ենթարկվեց: Ըստ երկու տուժողներին ներկայացնող փաստաբանի՝ ոստիկանությունը շատ դանդաղ է արձագանքել և դժկամությամբ է ձեռնամուխ եղել հիմնական ստանդարտ փորձաքննությունների անցկացմանը:

Բացի ֆիզիկական հարձակումներից, եղել են բազմաթիվ հաղորդումներ ոստիկանության կամ անհայտ անձանց կողմից քաղաքացիական ակտիվիստներին ահաբեկելու ու հետապնդելու վերաբերյալ, այդ թվում նրանց հետևելն ու սպառնալի հեռախոսազանգեր կատարելը:

Ցուցարարներն ու մարդու իրավունքների դիտորդները պնդում էին, թե հարձակումներն ու հետապնդումները եղել են իշխանությունների լուռ համաձայնությամբ: Հոկտեմբերի վերջի դրությամբ այդ հարձակումների քննությունը դեռ ընթացքի մեջ էր:

Փետրվարի 13-ին առաջին ատյանի դատարանը քաղաքացի Տիգրան Մանուկյանին տուգանեց 30000 ՀՀ դրամի (73 ԱՄՆ դոլարի) չափով Մարդու իրավունքների պաշտպանության Հելսինկյան ասոցիացիայի անդամ Արման Վեզիրյանի վրա հարձակում գործելու համար, երբ վերջինս դիտարկում էր ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսի նախընտրական միջոցառումը: Սկզբում դատախազները միջադեպի հետ կապված մեղադրանք էին ներկայացրել տուժող Վեզիրյանին, սակայն դրանք հանվեցին:

<u>Մարդու իրավունքների պաշտպանության պետական կառույցները</u>. Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) գրասենյակը պատասխանատու է մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները՝ ազգային, մարզային ու տեղական կառավարման մարմինների թույլ տված չարաշահումներից պաշտպանելու համար: Օմբուդսմենի գործունեության արդյունավետությունը երբեմն սահմանափակված է եղել սուղ ռեսուրսների պատճառով: Տարվա ընթացքում օմբուդսմենը հրապարակել է հերթական ու արտահերթ զեկույցներ մարդու իրավունքներին վերաբերող հարցերի շուրջ: Սուղ ռեսուրսների պատճառով օմբուդսմենի գրասենյակի շենքը ֆիզիկապես հասանելի չէր անվասայլակներով մարդկանց համար: Կառավարությունն օմբուդսմենի գրասենյակին չի տրամադրել լրացուցիչ ֆինանսավորում, որպեսզի այն իրականացնի Խոշտանգումների կանխարգելման ազգային կանխարգելման մեխանիզմի հետ կապված իր լիազորությունները, որ բխում են Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրությունից:

ՄԱՍ 6. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳ

Սահմանադրությամբ և օրենքներով արգելվում է ռասայի, սեռի, հաշմանդամության, լեզվի կամ սոցիալական կարգավիճակի հիման վրա խտրականությունը: Գործնականում կառավարությունն այդ արգելքներն արդյունավետորեն չի կիրառել:

ՀԱՅԱՍՏԱՆ

Կանայք

Բռնաբարություն և ընտանեկան բռնություններ. Բռնաբարությունը քրեական հանցագործություն է, որի համար սահմանված առավելագույն պատժաչափը 15 տարվա ազատազրկումն է. ամուսնական բռնաբարությունն իրավասու մարմինների կողմից հետապնդվում է բռնաբարության ընդհանուր հոդվածներով: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ տարվա առաջին ինն ամիսների ընթացքում գրանցվել է բռնաբարության 14 և բռնաբարության փորձի 3 դեպք, որոնցից ոչ մեկն ամուսնական բռնաբարության դեպք չի եղել: Սոցիալական պիտակավորման, ինչպես նաև կին ոստիկանների ու քննիչների բացակայության պատճառով բռնաբարության նման հանցանքների մասին հաղորդումները շարունակում են շատ քիչ լինել:

Թեպետ ընտանեկան բռնության համար օրենքով սահմանվում են պատժամիջոցներ, որոնք նույնն են ինչ բռնության մյուս ձևերի համար նախատեսված պատիժները, սակայն իրավասու մարմիններն ընտանեկան բռնության գործերով արդյունավետ դատական հետապնդումներ չեն իրականացնում: Ամուսինների ոտնձգությունները և կանանց դեմ բռնությունները լայն տարածում են գտել: Իրավապահների հաղորդումների համաձայն տարվա առաջին ինն ամիսների ընթացքում գրանցվել է 532 հաղորդում ընտանեկան բռնության վերաբերյալ, որոնցից 337-ի դեպում առկա էին բռնություններ ամուսնու, կնոջ կամ զուգընկերոջ կողմից: Կանանց իրավունքների ՀԿ-ների հաղորդմամբ 2012թ. հուլիսից մինչև հաջորդ տարվա օգոստոսի 30-ը ընտանեկան բռնությունների պատճառով 8 հոգի մահացել են, մեկ տասնյակից ավելն էլ ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ: Դեպքերի մեծ մասը տեղի են ունեցել փոքր քաղաքներում և գյուղերում:

Ընտանեկան բռնության զոհերին ցուցաբերվող ծառայությունների դիտարկման տվյալներով, որոնք հրապարակվել են տարվա ընթացքում, եղել են մի քանի ժամանակավոր և մշտական ապաստաններ Երևանում և մարզերում, որոնք բոլորն էլ գործարկվում էին ՀԿ-ների կողմից՝ մասնավոր կամ միջազգային ֆինանսավորմամբ:

Ըստ տեղական դիտորդների ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասի վերաբերյալ շարունակում են ոստիկանությանը չհայտնել, որովհետև տուժողները վախենում են ֆիզիկական վնասից, անհանգստանում են, որ ոստիկանությունը նրանց կվերադարձնի իրենց ամուսիններին, կամ ամաչում են ընտանեկան խնդիրներն ի ցույց դնելուց: Եղել են նաև հաղորդումներ, որ նման դեպքերում ոստիկանությունը դժկամություն է հանդես բերել ու չի խրախուսել կանանց բողոքներ ներկայացնել, հատկապես Երևանից դուրս՝ մարզերում: Ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասը եղել են թեթև կամ միջին ծանրության: Նման դեպքերում տուժողը կարող է հրաժարվել մեղադրանք ներկայացնելուց, իսկ ընտանեկան բռնությունների մասին հաղորդող տուժողները հաճախ ճնշումների են ենթարկվել բռնություն գործադրողների կողմից, որպեսզի ետ վերցնեն բողոքը կամ փոխեն իրենց նախկին ցուցմունքը:

Ըստ ԶԼՄ փորձագետների և կանանց իրավունքների ՀԿ-ների տեղական արտադրության սերիալները, որոնք լայն լսարան ունեն և հաճախակի ցուցադրվում են բոլոր հեռուստաալիքներով, լեգիտիմացնում են կանանց դեմ բռնություններն ու տարածում անհանդուրժողականություն նույնասեռականների հանդեպ:

Հոկտեմբերի 31-ին Հանրապետական կուսակցության անդամ, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Հայրապետյանը մամուլի ասուլիսի ժամանակ նշեց, որ ոչ մի հայ տղամարդ թույլ չի տա իր աղջկան ֆուտբոլ խաղալ, որ տղամարդն է ընտանիքի գլուխը, և որ հայ տղամարդիկ ու կանայք «չեն կարող հավասար լինել»:

2012թ. Գորիսի Կանանց ռեսուրս կենտրոն ՀԿ-ն հրապարակեց մի զեկույց հարսնացու առևանգելու մասին՝ հարավում գտնվող Սյունիքի մարզում 150 ամուսնացած կանանց շրջանում անցկացված հարցման արդյունքների հիման վրա: Զեկույցը եզրակացնում էր, որ աղջիկ փախցնելը տարածված երևույթ է, որը տարբեր դրսևորումներ ունի՝ սկսած ռոմանտիկ փախուստից մինչև հարկադիր

առևանգում: Հարցվածներից հինգից մեկը համարյա անծանոթ էր կամ էլ ընդհանրապես չէր ճանաչում իրեն փախցնողին: Զեկույցի համաձայն հարցվածների 9 տոկոսը նշել էին, որ իրենց պարտադրվել է սեռական հարաբերություն ունենալ հենց առևանգման օրը/գիշերը: Առևանգված կանանց մեծ մասն ամուսնացել են իրենց առևանգողների հետ: Չնայած հարցվածների մեծ մասն ամուսնացել են, քանի որ սիրահարված են եղել, մյուսներն ամուսնացել են ամոթից ու հուսահատությունից, որովհետև տուն վերադառնալ չէին կարող: Տարվա ընթացքում եղել են քրեական գործեր հարսնացու առևանգելու դեպքերով:

Հունիսի 24-ին Գլխավոր դատախազությունը վերաբացեց 2012թ. հուլիսին Կոտայքի մարզում Մարո Գուլոյանի մահվան փաստով հարուցված գործը, որով մահը վերագրվել էր ինքնասպանությանն ու գործը կարճվել էր: Թեև իրավասու մարմինների կողմից սկզբում գործ էր հարուցվել ամուսնու դեմ՝ ինքնասպանության դրդելու մեղադրանքով, սակայն Գուլոյանի ընտանիքը հավատացած էր, որ ամուսինը՝ Գևորգ Գուլոյանը սպանել է հոի կնոջն այն բանից հետո, երբ նա որոշել է լքել նրան: Ընտանիքի արտաշիրման պահանջը բավարարվեց և արդյունքում Մարո Գուլոյանի մարմնի վրա բացահայտվեցին բազմաթիվ վնասվածքներ, որոնք դիահերձման ժամանակ չէին արձանագրվել: Ըստ ընտանիքի փաստաբանի դիակի վիճակից դատելով չկային կախվելու միջոցով ինքնասպանություն գործելու նշաններ: Փաստաբանը մատնանշում էր նաև քննության ընթացքում տեղ գտած այլ անհամապատասխանություններ և պնդում էր, որ իրավապահ մարմինները պաշտպանել են ամուսնուն, ով մարզկենտրոն Աբովյանի քաղաքապետի ազգականն էր: Նոյեմբերի 18-ի դրությամբ քննությունն ընթացքի մեջ էր:

<u>Սեռական ոտնձգություններ</u>. Օրենքը հստակորեն չի արգելում սեռական ոտնձգությունները, չնայած այն անդրադառնում է անառակաբարո գործողություններին և անվայելուչ պահվածքին: Չնայած հրապարակային տվյալներ խնդրի ծավալների վերաբերյալ չկան, դիտորդները կարծում են, որ աշխատավայրում կանանց հանդեպ սեռական ոտնձգությունները լայն տարածում ունեն:

Օգոստոսին բազմաթիվ հաղորդումներ եղան ոստիկանների կողմից բողոքի ակցիաների ժամանակ կին ակտիվիստների նկատմամբ սեռական ոտնձգություններ թույլ տալու վերաբերյալ, այդ թվում խոսքի և հպումների միջոցով, որ տեղի էր ունենում այն ժամանակ, երբ ոստիկանությունը բերման էր ենթարկում ակտիվիստներին: Դեպքերից մեկում ոստիկանը, ով հետագայում պարզվեց, որ ավագ սերժանտ Հակոբ Խաչատրյանն է, լուսանկարելու պահին ակնհայտորեն համբուրում կամ փորձում էր համբուրել օգոստոսի 24-ի բողոքի ակցիայի մասնակցի պարանոցը: Ըստ ակտիվիստի ոստիկանն իրեն ամբողջ օրվա ընթացքում անհանգստացրել էր: Օգոստոսի 29-ին իշխող Հանրապետական կուսակցության անդամ Ազգային ժողովի կին պատգամավոր Շուշան Պետրոսյանը մամուլի ասուլիսում հայտարարեց, որ համբույրն ավելի լավ է, քան ծեծկռտուքը և որ այդ միջադեպը շատ «նուրբ» էր նայվում: Ըստ ԶԼՄ հաղորդումների Խաչատրյանի լիազորությունները դադարեցվել էին, և նշանակվել էր գործով քննություն:

<u>Վերարտադրողական իրավունքներ</u>. Ըստ օրենքի զույգերը և անհատներն իրավունք ունեն առանց խտրականության, հարկադրանքի կամ բռնության ազատ և պատասխանատու կերպով որոշում կայացնել, թե երբ, ինչ պարբերականությամբ և քանի երեխա են ունենալու, և ունենան միջոցներ և տեղեկատվություն դրա համար: Այս, ինչպես նաև երեխայի սեռով կամ այլ գործոններով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների վերաբերյալ որոշումները սովորաբար ընդունվում են ամուսնու և նրա ծնողների կողմից: Հակաբեղմնավորիչների մասին տեղեկացվածությունը և դրանց հասանելիությունը ցածր է: Մասնագիտական ծննդօգնությունն առավել հասանելի է մեծ քաղաքներում ու բնակելի կենտրոններում: Եղել են հաղորդումներ, որ հատկապես գյուղական և հեռավոր բնակավայրերում կանանց համար չի ապահովվել ընդհանուր առողջապահական ու վերարտադրողական առողջության ծառայությունների բավարար հասանելիություն:

ՀԱՅԱՍՏԱՆ

Խտրականություն. Տղամարդիկ և կանայք ունեն հավասար իրավական կարգավիճակ սահմանված ընտանեկան, աշխատանքային, գույքի ու ժառանգության մասին օրենսդրությամբ և դատական համակարգում, սակայն գենդերային խտրականությունը դեռևս խնդրահարույց էր պետական և մասնավոր հատվածներում: Ընդհանուր առմամբ կանայք չեն ունեցել մասնագիտական կամ աշխատավարձային նույն հնարավորությունները, ինչ տղամարդիկ, և հաճախ կատարել են որակավորում չպահանջող կամ ավելի ցածր վարձատրվող աշխատանքներ: Չնայած աշխատանքային օրենսգրքով աշխատանքային հարաբերությունների բոլոր կողմերի համար սահմանվում է «իրավահավասարություն», սակայն աշխատանքային օրենսգիրքը հավասար աշխատանքի համար հավասար վարձատրություն ապահովելու հստակ պահանջ չի դնում, և ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների 2010թ. կանանց և տղամարդկանց միջին ամսական աշխատավարձի չափերի միջև եղել է զգալի տարբերություն, և կին աշխատողների միջին ամսական աշխատավարձը երիտասարդ տարիքային խմբերի համար ավելի բարձր էր, քան բարձր տարիքային խմբերի համար: Շարունակում էր ցածր մնալ կանանց ներկայացվածությունը ղեկավար պաշտոններում՝ կառավարության բոլոր օղակներում ու մակարդակներում:

Մայիսի 20-ին Ազգային ժողովն ընդունեց օրենք Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման մասին: Օրենքի ընդունմամբ հասարակության մեջ բանավեճ ծավալվեց «գենդեր» և «գենդերային հավասարություն» հասկացությունների շուրջ: Որոշ խմբեր սկսեցին ապատեղեկատվություն տարածել սոցիալական ցանցերում՝ որպես թիրախ ընտրելով կանանց ՀԿ-ներին ու կանանց իրավունքների պաշտպաններին: Այս խմբերը շահարկում էին օրենքի ձևակերպումները և սկսեցին «գենդերային հավասարությունը» կապել նույնասեռականության քարոզչության ու մանկապղծության հետ: Կանանց իրավունքների պաշտպանները որակվում էին որպես «ազգի դավաճաններ», «ընտանիք խարխլողներ» և «սպառնալիք հայկական արժեքների նկատմամբ»: Որոշ նյութերում բռնության ու գույքի ոչնչացման կոչեր էին հնչում ընդդեմ կանանց կազմակերպությունների և ԼԳԲՏ անձանց:

Օգոստոսի 23-ին և սեպտեմբերի 3-ին Կանանց ռեսուրս կենտրոնը ոստիկանությունը հաղորդեց պայթեցման սպառնալիքի մասին, որ ստացվել էր Ֆեյսբուքի միջոցով: Ոստիկանությունը բացահայտեց սպառնացող ֆեյսբուքյան երկու օգտատերերից մեկի ինքնությունը, սակայն քրեական գործ չհարուցվեց, քանի որ ըստ հաղորդման այդ անձն իր արարքի համար զղջում էր: Նոյեմբերի 25-ին վարչապետին կից Կանանց խորհուրդը հանդես եկավ հայտարարությամբ, որով մտահոգություն էր հայտնում«գենդեր», «գենդերային հավասարություն» և «գենդերային ինքնություն» հասկացությունների սխալ մեկնաբանման արդյունքում հասարակության մեջ ստեղծված լարվածության, ինչպես նաև կանանց ՀԿ-ների դեմ ուղղված տեղեկատվական արշավի վերաբերյալ: Հայտարարությամբ իրավապահներին կոչ էր արվում ցուցաբերել զգոնություն նման դեպքերը կանխելու, իսկ անհրաժեշտության դեպքում նաև մեղավորներին խստորեն պատժելու համար: Հայտարարությամբ կառավարությունը նաև վերահաստատեց տեղական ու միջազգային իրավունքի ներքո կանանց իրավունքների պաշտպանության ու խթանման մասով ստանձնած պարտավորությունները կատարելու իր հանձնառությունը:

Սեռի նախածննդային ընտրություն. Կառավարությունը շարունակել է աջակցել երկրում սեռի նախածննդային ընտրության վերաբերյալ հետազոտությունների անցկացմանը: ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից մայիսին հրապարակված ամենավերջին հետազոտության տվյալներով երկրի տարբեր շրջաններում գրանցված ծնունդներում տղա-աղջիկ հարաբերակցությունն առաջնեկների շրջանում 111-124 տղայի դիմաց 100 աղջիկ է, իսկ երկրորդ և երրորդ երեխաների դեպքում 160 տղայի դիմաց 100 աղջիկ: Կառավարությունը դեռ չի ձեռնարկել քայլեր սեռային անհավասարակշռությունը շտկելու ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆ

Երեխաներ

Ծննդի գրանցում. Քաղաքացիությունը երեխաներին անցնում է ծնողներից և ծննդյան գրանցումը ծնողների պարտավորությունն է: Դիտորդները նշում են, որ որոշ ծնողներ՝ մասնավորապես չքավոր ու սոցիալապես առավել խոցելի խմբերից, հիմնականում ծննդյան գրանցում կատարող կենտրոններ հասնելու հետ կապված տրանսպորտային ծախսերից ելնելով, չեն կարողացել գրանցել երեխայի ծնունդը: Ծննդյան վկայականի բացակայությունն, ըստ էության, այդ երեխաներին զրկում է էական սոցիալական ծառայություններից օգտվելու հնարավորությունից՝ առավել խոցելի դարձնելով նրանց: Տարվա ընթացքում իրավիճակը շտկելու հարցում միջազգային դոնորները շարունակել են աշխատել կառավարության հետ: ՅՈՒՆԻՍԵՖ-ի տվյալներով 2000-10թթ. ծնված երեխաների 96 տոկոսի ծնունդը գրանցվել է:

Երեխաների նկատմամբ բռնություն. 2011թ. «Սեյվ դը չիլդրեն» միջազգային ՀԿ-ի տեղական մասնաճյուղը հրապարակեց Կոտայքի, Արագածոտնի և Շիրակի մարզերում երեխաների հանդեպ ոտնձգությունների մասին ուսումնասիրությունը: Այն նշում էր, որ երեխաներին ընտանիքի անդամները երբեմն ենթարկում են ֆիզիկական ու հոգեբանական բռնության և անտեսում, մասնավորապես՝ պատշաճ սնունդ, հագուստ ու կացարան չապահովելու առումով: Երեխաների հաղորդմամբ տնից դուրս նույնպես նրանց նկատմամբ լինում են հոգեբանական ու ֆիզիկական բռնություններ՝ հաստատություններում, դպրոցներում, երբեմն էլ փողոցներում:

Հարկադիր և վաղ ամուսնություն. Ապրիլի 30-ին ընտանեկան օրենսգրքում կատարված փոփոխություններով թե տղաների, թե աղջիկների համար ամուսնության նվազագույն տարիք է սահմանվել 18 տարին, չնայած ծնողների կամ խնամակալների համաձայնությամբ թույլատրվում է նաև ամուսնությունը 17 տարեկանում, իսկ 16 տարեկանում ամուսնությունը թույլատրվում է ծնողների կամ խնամակալի համաձայնությամբ, եթե կողմերից մեկն առնվազն 18 տարեկան է: ՅՈՒՆԻՍԵՖ-ի տվյալներով 2000-10թթ. երեխաների (տղաների և աղջիկների) միջին հաշվով 10 տոկոսն ամուսնացել է մինչև 18 տարեկանը: Մարդու իրավունքների հարցերով դիտորդները մտահոգություն են հայտնել ամուսնական տարիքի իջնելու վերաբերյալ:

Երեխաների սեռական շահագործում. Հակաթրաֆիկինգային հոդվածներով օրենքն արգելում է երեխաների սեռական շահագործումը և երեխաների թրաֆիկինգի համար սահմանվում է 7-15 տարվա ազատազրկում՝ կախված ծանրացուցիչ հանգամանքների առկայությունից: Մանկական պոռնկագրությունը պատժվում է մինչև յոթ տարի ազատազրկմամբ:

Սեռական հարաբերությունը 16 տարին չլրացած անձի հետ պատժվում է տույժով և մինչև երկու տարի ազատազրկմամբ: Ըստ տեղական դիտորդների չի ապահովվում անհրաժեշտ իրավական դաշտ երեխաների հետ կապված սեռական բնույթի հանցանքներին համարժեք գնահատական տալու ու դրանց հանդեպ համարժեք քրեական հետապնդում իրականացնելու համար: Անչափահասներին սեքսուալ բնույթի առաջարկներ անելը կամ 16 տարին չլրացած անձի հետ սեռական գործողություններ կատարելու մասին չհաղորդելը քրեորեն հետապնդելի չէ:

Խնամատար հաստատություններում գտնվող երեխաներ. Հուլիսի 3-ին ՀԿ-ների ներկայացուցիչներից կազմված գիշերօթիկ և հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում մշտադիտարկում իրականացնող հասարակական դիտորդների խումբը հրապարակեց 19 հաստատություններում 2012թ. ապրիլ-հուլիս ամիսների կատարած մշտադիտարկման տվյալները: Զեկույցի համաձայն այդ հաստատություններում ոտնահարված կամ վտանգված են երեխաների գրեթե բոլոր իրավունքները: Չնայած կառավարությունը խնդիր է դրել կրճատել խնամատար հաստատություններում տեղավորված երեխաների թիվը, սակայն ավելի քան 4000 երեխաներ մնում են այդ հաստատություններում: Խնամատար հաստատություններում տեղավորված երեխաների 80 տոկոսն ունեն ծնողներ: Ըստ փորձագետների կոռուպցիան այն հիմնական պատճառն է, որ հաստատություններում երեխաների թվի կրճատման ջանքերը հաջողությամբ չեն պսակվում, քանի որ

պետական ֆինանսավորմամբ մանկատների, գիշերօթիկ ու հանրակրթական դպրոցների ֆինանսավորումը կատարվում է ըստ երեխաների թվի: ՀԿ-ներից մեկի հաղորդմամբ, մշտադիտարկված հաստատությունների աշխատողները նշել են, որ նոր ուսումնական տարվա սկզբում իրենց առջև պահանջ է դրվում հաստատություն բերել առնվազն երկու գիշերող երեխա, եթե ցանկանում են պահպանել իրենց աշխատատեղը: Զեկույցի համաձայն մշտադիտարկման ենթարկված հաստատություններում երեխաները լիարժեք պաշտպանված չեն բնություններից, անտեսումից ու նվաստացուցիչ պատիժներից: Բազմաթիվ դեպքերում հաստատության անձնակազմը կիրառվող մեթոդները չի համարում բռնություն՝ դա ուղղակի որակելով որպես պատիժ վատ վարքի համար: Բռնությունների մասին խոսելիս երեխաները ևս դա համարել են որպես անհրաժեշտ միջոց վատ վարքի ու անհնազանդության դեմ: Զեկույցի համաձայն մշտադիտարկված հաստատություններից 16-ում օգտագործվում էին այնպիսի մեթոդներ, որոնք հստակորեն հանդիսանում են երեխաների նկատմամբ հոգեբանական ու ֆիզիկական բռնության դրսևորում:

Երկրում իրավիճակը դիտարկելուց հետո Երեխաների իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն հունիսի 14-ին հրապարակեց զեկույց, որը կոչ էր անում պատկան մարմիններին քննություն իրականացնել փակ ու մասամբ փակ հաստատություններում տեղ գտած բռնության առանձին դեպքերով, պատասխանատվության ենթարկել ու պատժել մեղավորներին: Այն առաջարկում էր իրավասու մարմիններին առհասարակ արգելել մարմնական պատիժները ցանկացած միջավայրում և ապահովել օրենսդրորեն սահմանված կիրարկման մեխանիզմներ, այդ թվում՝ համապատասխան պատժամիջոցներ խախտման պարագայում:

Երեխաների միջազգային առևանգում. Երկիրը միացել է «Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական ասպեկտների մասին» 1980 թ. Հաագայի կոնվենցիային:

Հակասեմականություն

Երկրի հրեա ազգաբնակչությունը կազմում է 500-1000 հոգի: Տարվա ընթացքում հակասեմական գործողությունների մասին հաղորդումներ չեն եղել:

Մարդկանց թրաֆիկինգ

Տես՝ Պետքարտուղարության Մարդկանց թրաֆիկինգի մասին զեկույցը http://www.state.gov/j/tip էջում:

Հաշմանդամներ

Չնայած օրենքով արգելվում է որևէ տեսակի հաշմանդամություն ունեցող մարդկանց հանդեպ խտրականություն կիրառել աշխատանքում, կրթության, առողջապահության հասանելիության և պետական այլ ծառայությունների տրամադրման գործում, խտրականությունը շարունակում է մնալ խնդրահարույց: Օրենքով և կառավարության հատուկ որոշմամբ պահանջվում է, որ շենքերը, այդ թվում՝ դպրոցները ֆիզիկապես հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, բայց գործնականում շատ քիչ շենքեր ու հաստատություններ են նրանց համար եղել հասանելի: Հաշմանդամների իրավունքների պաշտպանության պատասխանատվությունը վերապահված է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, որն այն արդյունավետ կերպով չի իրականացրել:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ հազվադեպ են տնից դուրս գալիս՝ հաշմանդամության երևույթի հասարակական պիտակավորման արդյունքում: Երբեմն հաշմանդամություն ունեցող երեխաները դպրոց չեն հաճախում մի կողմից ցուցաբերվող խտրականության, մյուս կողմից էլ դպրոցներում նրանց կարիքներին համապատասխան հարմարությունների բացակայության պատճառով: 2012թ. ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից անցկացված հետազոտության տվյալներով յուրաքանչյուր 5 հաշմանդամ

երեխայից մեկը դպրոց չէր հաճախում և ամեն 8 հաշմանդամ երեխայից մեկը տեղավորված էր հատուկ հաստատություններում (մանկատներում կամ հատուկ գիշերօթիկ դպրոցներում): Այդ երեխաների շրջանում ներառական հանրակրթական դպրոց են հաճախում 20-ից մեկը, 20-ից 5-ը հաճախում են հատուկ դպրոցներ, իսկ 20-ից 14-ը դպրոց ընդհանրապես չեն հաճախում: Ըստ 2012թ. պաշտոնական տվյալների հաշմանդամություն ունեցող երեխաների 64.8 տոկոսն աղքատ են իսկ ևս 8.4 տոկոսն էլ՝ ծայրահեղ աղքատ:

Բոլոր տեսակի հաշմանդամություն ունեցող մարդիկ դժվարություններ են ունենում կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, լինի դա բուժօգնությունը, սոցիալ-հոգեբանական վերականգնումը, կրթությունը, տրանսպորտը, հաղորդակցությունը, աշխատանք ունենալը և սոցիալական պաշտպանվածությունը: Հաշմանդամություն ունեցող կանանց համար առավել արտահայտված էր հասարակության կողմից ընդունված լինելու հանգամանքը: Տեղեկատվության ու հաղորդակցության հասանելիության խնդիրն առավել մեծ էր տեսալսողական խնդիրներ ունեցողների համար: Քրեակատարողական հիմնարկներում չկային համարժեք հարմարություններ հաշմանդամների համար:

Ստանդարտներից ցածր էին նաև ծանր հաշմանդամների համար նախատեսված հիվանդանոցային, տնային խնամքի և այլ ինստիտուցիոնալ պայմանները: Ըստ պաշտոնական տվյալների աշխատունակ հաշմանդամների ավելի քան 90 տոկոսն աշխատանք չունի:

Սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության վրա հիմնված չարաշահումներ, խտրականություն և բռնության դրսևորումներ

Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հետ կապված խտրականության դեմ օրենքներ չկան: Ընդհանուր առմամբ հասարակության վերաբերմունքը ԼԳԲՏ անձանց հանդեպ շարունակում էր մնալ խիստ բացասական և հասարակությունն ընդհանուր առմամբ դիտարկում էր նույնասեռականությունը որպես հիվանդություն: Հասարակության կողմից սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության վրա հիմնված խտրականության դրսևորումը բացասաբար է անդրադարձել զբաղվածության, ընտանեկան հարաբերությունների, կրթության ու առողջապահական ծառայությունների հասանելիության վրա:

Տարվա ընթացքում օմբուդսմենի գրասենյակի կողմից մշակված խտրականության դեմ առաջարկվող օրենքը, որը սկզբնապես դրույթ էր պարունակում ԼԳԲՏ-ների մասին, նույնասեռականների դեմ ատելության ալիք բարձրացրեց: Սա Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման մասին օրենքի հետ միասին առավել մեկուսացրեց ԼԳԲՏ-ներին և այն սակավաթիվ ՀԿ-ներին, որոնք պաշտպանում էին ԼԳԲՏ անձանց իրավունքները, քանի որ նախընտրեցին աչքի չընկնել, որպեսզի խուսափեն իրենց դեմ հնարավոր հարձակումներից, վիրավորական խոսքերից ու ֆիզիկական հարձակումներից (տես՝ Բաժին 6. Կանայք):

Օգոստոսին «Նոր սերունդ» ՀԿ-ը ներկայացրեց ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքի հետ կապված մարզերի իրավապաշտպան կազմակերպությունների շրջանում անցկացված հետազոտության արդյունքները: Հարցումը մատնանշում էր իրազեկվածության ցածր մակարդակ և հիմնականում բացասական տրամադրվածություն ԼԳԲՏ անձանց նկատմամբ, ընդ որում որոշ հարցվածներ կարծիք էին հայտնել, որ նույնասեռականությունը հիվանդություն է և ԼԳԲՏ անձանց օգնելու լավագույն ուղին նրանց բուժելն է:

Հուլիսի 25-ին առաջին ատյանի դատարանը երկու տարվա պայմանական ազատազրկման դատապարտվեց եղբայրներ Արամեի և Համբիկ Մկրտիչ Խաչատուրներին 2012թ. մայիսին Երևանի DIY բարի վրա հրկիզող ռումբ նետելու համար. տվյալ բարը հանրաճանաչ հավաքատեղի էր կանանց և փոքրամասնությունների, այդ թվում ԼԳԲՏ-ների համար հավասար իրավունքներ ջատագովող ակտիվիստների համար: Դատարանը նաև եղբայրներին տուգանեց 3227563 ՀՀ դրամի (7900 ԱՄՆ դոլարի) չափով՝որպես բարի սեփականատիրոջ կրած վնասի փոխհատուցում: Եղբայրներն

ընդունեցին իրենց մեղավորությունը, և դատը շարունակվեց արագացված կարգով, որն ինչ-որ տեղ նման է գործարքի բանակցմանը:

Ակնհայտ նույնասեռական տղամարդիկ ազատվել են զինվորական ծառայությունից՝ ենթադրաբար առաջնորդվելով այն մտահոգություններով, որ նրանք կարող են ենթարկվել դաժան վերաբերմունքի համազորայինների կողմից: Ազատումը հիմնավորվում էր հոգենյարդաբանական հետազոտման բժշկական եզրակացությամբ առ այն, որ անձի մոտ կա հոգեկան խանգարում, և այս մասին նշում էր կատարվում անձնական գործում:

Մարդու իրավունքների ակտիվիստները նշում են, որ բանտերում սեռական փոքրամասնությունները հաճախ դառնում են նվաստացուցիչ խտրականության թիրախ, նրանց ստիպում են կատարել նվաստացնող աշխատանքներ և առանձնացնում են մյուս բանտարկյալներից:

Բռնության և խտրականության այլ դրսևորումներ հասարակությունում

Տարվա ընթացքում ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիրների հանդեպ հասարակական բռնությունների ու խտրականություն դրսևորումների մասին հաղորդումներ չեն եղել: Երեխաների իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն հունիսի 14-ի իր ամփոփիչ դիտարկումներում մտահոգություն էր հայտնում երեխաների առանձին ենթախմբերի, այդ թվում ՄԻԱՎ ունեցողների նկատմամբ դե ֆակտո խտրականության դրսևորման վերաբերյալ:

Շատ գործատուներ ըստ հաղորդումների խտրականություն են դրսևորում հնարավոր աշխատողների նկատմամբ ըստ տարիքի՝ հաճախակի պահանջելով, որ թափուր տեղերի համար դիմողները լինեն 18-30 տարեկան: Օրինակ, տարվա ընթացքում Երևանի քաղաքապետարանը հայտարարություն էր ներկայացրել տուրիստական գործակալի թափուր տեղի համար, որտեղ պահանջներում նշված էր, որ դիմողները պետք է լինեն մինչև 30 տարեկան: Չնայած որ այս խտրականությունը բավական լայն տարածում ուներ, իշխանությունները ոչ մի գործողություն չեն ձեռնարկել այն մեղմելու համար: 40 տարեկանից հետո, աշխատանք չունեցող աշխատողները, հատկապես՝ կանայք, շատ քիչ հնարավորություն ունեն իրենց կրթությանն ու հմտություններին համարժեք աշխատանք գտնել:

ՄԱՍ 7. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ա) Միավորումներ կազմելու ազատությունը և կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունքը

Օրենքը պաշտպանում է անկախ միավորումներ կազմելու և դրանց անդամակցելու աշխատողների իրավունքը՝ բացառությամբ բանակում ծառայողների և իրավապահ մարմինների աշխատակիցների: Օրենքը նաև սահմանում է գործադուլների իրավունք՝ նույն բացառություններով, և թույլատրում է կոլեկտիվ պայմանագրերի կնքում: Օրենքը նախատեսում է, որ միություններին անդամակցելու պատճառով աշխատողի իրավունքները չեն կարող սահմանափակվել: Աշխատանքային օրենսգրքում ներկայացվում են այն հիմնավոր պատճառները, որոնց հիման վրա աշխատողին կարող են հեռացնել աշխատանքից, և այդ շարքում միութենական գործունեությունն ընդգրկված չէ:

Աշխատանքային իրավունքները միշտ չէ, որ հարգվել են: Երկրում գործատուների դիմադրության, գործազրկության բարձր մակարդակի և վատ տնտեսական պայմանների պատճառով աշխատավորական կազմակերպությունները մնացել են թույլ: Արհմիությունները հիմնականում պասիվ են եղել, բացառությամբ հանքարդյունահանման ու քիմիական արդյունաբերության ոլորտի արհմիությունների: Եղել են փոքրամասշտաբ բողոքի ակցիաներ, որոնցով աշխատողներն իրենց դժգոհությունն են հայտնել աշխատավարձերի ուշացման, աշխատանքային պայմանագրերի խախտումների և աշխատանքի վտանգավոր պայմանների վերաբերյալ: Միությունները սերտորեն կապված էին իշխանություններին: Հակամիութենական խտրականության դրսևորումների մասին

տարվա ընթացքում որոշակի հաղորդումներ չեն եղել, բայց ըստ հաղորդումների նախորդ տարիներին որոշ հանքարդյունահանող ձեռնարկություններ, այդ թվում օտարերկրյա ներդրողների կողմից ֆինանսավորվող, արհեստակցական միություններին աշխատողների միանալը կամ իրավունքների դատական պաշտպանություն փնտրելը չեն խրախուսել՝ աշխատանքը կորցնելու ակնարկվող սպառնալիքով:

բ) Հարկադիր կամ ստրկական աշխատանքի արգելում

Օրենքով արգելվում են հարկադիր կամ ստրկական աշխատանքի բոլոր տեսակները և կառավարությունն արդյունավետորեն իրականացրել է այդ օրենքները: Տարվա առաջին ինն ամիսների ընթացքում կառավարության կողմից քննվել է աշխատանքային թրաֆիքինգի 3 գործ և դատարան է ուղարկվել 2-ը, որոնք եղել են միակ հաղորդումները հարկադիր աշխատանքի մասին:

Տես նաև՝ Մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ Պետքարտուղարության զեկույցը www.state.gov/j/tip էջում:

գ) Երեխայի աշխատանքի արգելում և աշխատելու նվազագույն տարիք

Գոյություն ունեն օրենքներ ու կարգեր, որոնք երեխաներին աշխատավայրում պաշտպանում են շահագործումից: Աշխատանքի անցնելու նվազագույն տարիքը 16-ն է, սակայն ծնողի կամ խնամակալի թույլտվությամբ երեխաները կարող են աշխատել 14 տարեկանից: 18 տարին չլրացած անձանց համար արգելվում է արտաժամյա աշխատանքը, աշխատանքը վնասակար, դժվարին ու վտանգավոր պայմաններում, տոն օրերին և գիշերային ժամերին:

Եղել են մանկական աշխատանքի մասին սակավաթիվ հաղորդումներ: Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի 2010թ. հետազոտության տվյալներով մանկական աշխատանքում ներգրավված է երեխաների 4 տոկոսը, որոնց գերակշիռ մասն զբաղված է եղել ընտանեկան բիզնեսում:

Երեխաների իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն հունիսի 14-ի հրապարակած զեկույցում մտահոգություն հայտնեց, որ զգալի թվով երեխաներ, այդ թվում 14 տարին չլրացած երեխաներ դուրս են գալիս դպրոցից աշխատելու ստվերային այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, ավտոտեխսպասարկումը, շինարարությունը, մետաղի ջարդոն հավաքելը և ընտանեկան բիզնեսը: Կոմիտեն առանձնակի մտահոգություն էր հայտնում փողոցներում մուրացկանություն անող և ծանր ֆիզիկական աշխատանք կատարող՝ բանվոր և բեռնակիր երեխաների թվի ավելացման վերաբերյալ: Այն նաև մտահոգություն հայտնեց, որ աշխատանքային տեսչություններն արդյունավետորեն չեն վերահսկում մանկական աշխատանքը:

Տես նաև՝ ԱՄՆ աշխատանքի դեպարտամենտի Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի մասին բացահայտումները www.dol.gov/ilab/programs/ocft/tda.htm էջում:

դ) Աշխատանքի ընդունելի պայմաններ

Ամսական նվազագույն աշխատավարձը կազմել է 45000 դրամ (110 ԱՄՆ դոլար): 2011թ. ամենավերջին պաշտոնական հաշվարկներով ծայրահեղ աղքատության շեմը կազմել է 21306 դրամ (52 ԱՄՆ դոլար), իսկ ընդհանուր աղքատության շեմը կազմել է 29856 դրամ (73 ԱՄՆ դոլար):

Օրենքով աշխատանքային շաբաթվա տևողությունը 40 ժամ է, և սահմանված է տարեկան 20 օր պարտադիր արձակուրդ, ինչպես նաև փոխհատուցում արտաժամյա և գիշերային աշխատանքի դիմաց: Օրենքով նաև սահմանվում է, որ պարտադիր արտաժամյա աշխատանքը երկու հաջորդական օրվա ընթացքում չի կարող գերազանցել 4 ժամը, իսկ տարվա ընթացքում՝ 180 ժամը: Գործնականում

պետական մարմինների կողմից այս ստանդարտների կիրառումն արդյունավետորեն չի ապահովվել: Մասնավոր ոլորտի շատ աշխատողներ, հատկապես սպասարկման ոլորտում չեն կարողացել օգտվել վճարովի արձակուրդից ու նրանցից պահանջվել է աշխատել օրական 8 ժամից շատ ավել՝ առանց վարձատրության: Ըստ որոշ զբաղվածության գործակալությունների ներկայացուցիչների շատ գործատուներ շարունակել են աշխատողներ ընդունել 10-30 օր «փորձաշրջանով», որի ընթացքում նրանք չեն վճարվել: Այնուհետև հաճախ այս աշխատողներին արձակել են, բայց, քանի որ այս նախնական աշխատանքն օրինականորեն ձևակերպված չէր, նրանք չեն կարողացել պահանջել աշխատած օրերի վճարը:

Աշխատանքային անվտանգության ու առողջության պահպանման ստանդարտները սահմանվել են կառավարության որոշմամբ: Աշխատանքի պետական տեսչությունը՝ 126 տեսուչներով, պատասխանատու էր այս ստանդարտների կիրառումն ապահովելու համար, սակայն դա արդյունավետորեն չէր անում: Տարվա ընթացքում ըստ հաղորդումների Աշխատանքի պետական տեսչությունը քիչ առաջընթաց է ունեցել տեսչական ռեժիմի կամ աշխատանքային օրենսգրքի կիրառման ապահովմանն ուղղված աշխատանքներում, իսկ կոռուպցիան խարխլել է տեսչության աշխատանքը: Օգոստոսին կառավարության որոշմամբ Աշխատանքի պետական տեսչությունը դուրս բերվեց Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմից և միացվեց Առողջապահության նախարարությանը: Դիտորդները նկատում են, որ Աշխատանքի պետական տեսչությունը չի ունեցել բավարար ռեսուրսներ և անձնակազմ: Տեսուչների ուշադրության կենտրոնում աշխատանքային անվտանգության նորմերի ու աշխատողների իրավունքներին առնչվող հարցերի փոխարեն հիմնականում եղել են սոցիալական ապահովության վճարումները և այլ հարկային հարցեր: Որոշ աղքատ բնակավայրերում հիմնական գործատու հանդիսացող ձեռնարկությունների կառավարիչները հաճախ օգտվում էին այլ աշխատանք չլինելու հանգամանքից և անտեսում էին համարժեք վարձատրության, աշխատանքի անվտանգ պայմանների ապահովման հարցերը և բնապահպանական մտահոգությունները: Ստվերային աշխատողները զրկված էին պետական պաշտպանության որևէ ձևից:

Շատ ոլորտներում աշխատավայրի անվտանգության ու առողջապահական պայմանները շարունակել են չհամապատասխանել ստանդարտներին, և տարվա ընթացքում գրանցվել է մահացու ելքով մի քանի աշխատանքային պատահար: